


ՀԱՅ ԲՇՆԱԿԱՐԳԻՐ

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ՀԻՆ
ԹԱՐԳԱՄԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՄԱՏԵՆԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՄԵԼԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՃՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ԲԱՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԻԺ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԱՐԱՏՉՆԵՐԻ ՄԱՏԵՆԴԱՐ




ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ՝ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ ՀԻՆ
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1984

9/8/84

Մատենաշարի խմբագրական մարմին
 Ս. Ս. ԱՐԵՎԵՐՍՅԱՆ, Ն. Կ. ԹԱԼՄԻՋՅԱՆ,
 Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Ա. Շ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ,
 Բ. Լ. ՉՈՒԳԱՍՋՅԱՆ (նախագահ)
 Պատասխանատու խմբագիր՝
 Ս. Ս. ԱՐԵՎԵՐՍՅԱՆ

Տեր - Պետրոսյան. Լ. Հ.

S 370 Հայ հին թարգմանական գրականություն (Պատ. խմբ.
 Ս. Ս. Արևշատյան. — Եր.: Սովետ. գրող, 1984. 60 էջ,
 4թ. նկ.)։ («Հայ մշակույթ» գիտահանրամատչ. մատենա-
 շար, Մատենադարան, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին
 առընթեր Մատոցի անվ. հին ձեռագրերի ինստ.)։

Գրքույկո նվիրված է V — XVIII դարերի հայկական թարգմանու-
 թյուններին, որոնց միջոցով միջնադարյան հայ հասարակության
 սեփականություն են դարձել տարբեր ժողովուրդների գրականու-
 թյան, փիլիսոփայության, բնագիտության և հոգևոր մշակույթի այլ
 բնագավառների կարևոր նվաճումները։

Նախատեսված է գրական - մշակութային կապերի հարցերով
 հետաքրքրվող ընթերցողների համար։

ԳՄԴ 83
 8

S $\frac{4901000000 (20)}{705(01) 84}$ — 239, 84 — «S»

Իր ողջ գոյության ընթացքում հայ ազգային մատենագրությունն ուղեկցվել է տարբեր լեզուներից՝ հունարենից, ասորերենից, լատիներենից, արաբերենից կատարվող թարգմանություններով, որոնք եղել են նրա զարգացումն ապահովող կարևորագույն գործոններից և սնուցման հիմնական աղբյուրներից մեկը: Միջնադարում հատուկ ենտ թարգմանություններ են կատարվել նաև վրացերենից, պարսկերենից, հին ֆրանսերենից, թուրքերենից, եթովպերենից, ռուսերենից, անգլերենից, իտալերենից, լեհերենից և իսպաներենից:

Թարգմանական շարժումը Հայաստանում սկիզբ է առել գրերի գյուտից (405 թ.) անմիջապես հետո, հայ ժողովրդի հոգևոր առաջնորդներ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի նախաձեռնությամբ ու գործուն մասնակցությամբ: Թարգմանական երկերը նշանակալից դեր են խաղացել հայկական ինքնուրույն մատենագրության զարգացման, հայ ընթերցողի մտահորիզոնի ընդլայնման և հայոց լեզվի հարստացման գործում: Նրանցում իրենց շոշափելի արտահայտությունն են գտել նաև հայ ժողովրդի դարավոր մշակութային հարաբերությունները այլ ժողովուրդների, առաջին հերթին իրենց անմիջական հարևանների՝ հույների և ասորիների, ինչպես նաև վրացիների, արաբների, պարսիկների և եվրոպացիների հետ:

Թարգմանության միջոցով հայ հասարակության սեփականությունն են դարձել անտիկ փիլիսոփայության ու բնագիտության, քրիստոնեական աստվածաբանության, միջնադարյան գեղարվեստական գրականության և արևելյան բժշկագիտության բոլոր կարևոր նվաճումները, որոնք հիմք են հանդիսացել սեփական արժեքների ստեղծման համար:

Պատմամշակութային տեսակետից թարգմանական և ինքնուրույն երկերի զանազանումը սոսկ պայմանական նշանակություն ունի, քանի որ թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով դրանք ներկայացնում են միասնական գրական իրողության հավասարարժեք կողմերը: Միջնադարում, ըստ էության, նրանց տարբերությունը բոլորովին չի գիտակցվել, և հայ ընթերցողի կողմից միևնույն պատվին են արժանացել ինչպես ազգային, այնպես և օտար հեղինակները: Դրա վկայությունն են հայկական բազմահազար ձեռագրերը, որոնցում ինքնուրույն և թարգմանական գործերը հանդես են գալիս կողք-կողքի, առանց տարանջատման, և հազվադեպ կարելի է հանդիպել ձեռագիր ժողովածուների, որոնք կազմված լինեն միայն հայ հեղինակների երկերից:

Ինչպես բոլոր արևելաքրիստոնեական գրականություններում, հայ գրականության մեջ նույնպես թարգմանությունները նախորդել են ինքնուրույն մատենագրության սկզբնավորմանը: Սակայն անցումը թարգմանական գրականությունից դեպի ինքնուրույնը V դարի հայ իրականության մեջ տեղի է ունեցել այնքան կարճ ժամանակամիջոցում, որ այսօր էլ զարմանք է պատճառում հետազոտողներին: Թարգմանական գործի ձեռնարկումից ընդամենը մի քանի տասնամյակ հետո հայ հեղինակների՝ Մաշտոցի, Կորյունի, Եզնիկ Կողբացու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու ջանքերով ստեղծվեցին բազմաթիվ բարձրարժեք և ինքնատիպ երկեր: Ինքնուրույն մատենագրության

ստեղծամբ, սակայն, թարգմանչական գործը Հայաստանում ոչ միայն չդադարեց, այլև հետզհետե ընդգրկելով ավելի լայն բնագավառներ, գոյատևեց ընդհուպ մինչև նորագույն ժամանակները:

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ

Հայ թարգմանական գրականության պատմությունն իրենից ներկայացնում է մի անընդհատ շղթա, որը, բնականաբար, ունեցել է իր վերելքի և վայրէջքի դարաշրջանները՝ պայմանավորված մշակույթի ընդհանուր զարգացման օրինաչափություններով: Ընդգրկած երկերի բնույթով, հետապնդած նպատակներով և թարգմանչական սկզբունքներով իրարից որոշակիորեն տարբերվում են հայ թարգմանական գրականության ծաղկման հետևյալ հինգ շրջանները, որոնց պարբերացումը կատարված է մի կողմից ժամանակագրական, մյուս կողմից՝ պատմամշակութային հատկանիշների հաշվառման հիման վրա:

ա. Դասական թարգմանություններ (ողջ V դ.).

բ. Հունաբան դպրոցի թարգմանություններ (V դ. վերջ—VIII դ. սկիզբ).

գ. Կիլիկյան շրջանի թարգմանություններ (XII—XIII դդ.).

դ. Միարարական (ուսիթոռական) միջավայրի թարգմանություններ (XIV դ.).

ե. Ուշմիջնադարյան թարգմանություններ (XVII—XVIII դդ.):

Ինչպես տեսնում ենք, սույն դասակարգումից դուրս են մնում VIII դարի սկզբից մինչև XI դարն ընդգրկող ժամանակահատվածը և XV—XVI դարերը, որոնք կարելի է բնորոշել որպես թարգմանական գրականության անկման շրջաններ:

Դասական շրջանի թարգմանությունները կոչված էին բավարարություն տալու սկզբնավորվող հայ մատենագրության առաջնահերթ պահանջներին, ապահովելու եկեղեցու գաղափարական և արարողական գործունեությունն ու կրթական գործի կազմակերպումը: Այդ պատճառով առաջին հայ թարգմանիչների ջանքերի մեջ նկատվում է մի այնպիսի նպատակասլացություն, որը, գերմանացի հայագետ Ֆ. Ֆինկի բնորոշմամբ, իրավացիորեն կարելի է անվանել «մշակույթի փոխանցման գիտակցված ծրագիր»: Այդ ծրագիրը պահանջում էր թարգմանել նախ և առաջ Աստվածաշունչը, այնուհետև արարողական գրքերը, հայրաբանական երկասիրությունները, մեկնողական և ջատագովական աշխատությունները, եկեղեցական պատմություններն ու կանոնները, վարքերն ու վկայաբանությունները, այսինքն՝ քրիստոնեական գիտելիքների այն ամբողջությունը (բիբլիկա, լիտուրգիկա, պատրիստիկա, հերմենևտիկա, ապոլոգետիկա, հիստորիա, կանոնիկա, հագիոգրաֆիա), որն անհրաժեշտ էր հայոց եկեղեցու անմիջական կարիքների բավարարման և հայ ազգային մատենագրության զարգացման համար:

V դարից մեզ հասած բազմաքանակ և տարաբնույթ թարգմանական հուշարձանները ցույց են տալիս, որ հայ մատենագրության հիմնադիրները լիովին իրագործել են իրենց առջև դրված խնդիրը, թարգմանություններ կատարելով բյուզանդական և ասորական քրիստոնեական գրականությունների նշված բոլոր բնագավառներից: Հայ թարգմանական գրականության հնագույն և պատմամշակութային ու գիտական տեսակետից ամենակարևոր հուշարձանը Աստվածաշունչն է, որը, ինչպես պարզված է, իր վերջնական տեսքն ստացել է V դարի 30-ական թվականներին: Թափանցելով հայ ժողովրդի հասարակական կյանքի բոլոր ոլորտները, Աստվածաշունչի թարգմանությունն իր որոշակի կնիքն է դրել ողջ հայկական

մշակույթի՝ գրականության, արվեստի, գիտության և նույնիսկ ժողովրդական բանահյուսության վրա: Ամբողջությամբ նրանով են ներծծված միջնադարյան հայ հոգևոր բանաստեղծությունը, մանրանկարչությունը, երաժշտությունը և ճարտարապետությունը: Որոշ առումով գրչության արվեստի զարգացումը ևս կապված է Աստվածաշնչի հետ, որովհետև միջնադարում այն հանդիսանում էր ամենաշատ ընդօրինակվող և տարածվող գիրքը: Աստվածաշնչական բնագրերը սովորաբար արտագրվում էին խոշոր վանքերին կից գործող մասնագիտացված գրչատներում, լավագույն գրիչների ձեռքով, ամենաընտիր մագաղաթի վրա, հանգամանքներ, որոնք չէին կարող բարերար ազդեցություն չունենալ գրչության առաջընթացի գործում:

Աստվածաշնչից հետո առաջին հայ թարգմանիչները հայերեն են թարգմանել քրիստոնեական եկեղեցու ամենաականավոր հեղինակությունների, այսպես կոչված սուրբ հայրերի երկերը, որոնց թըվում կարելի է հիշատակել Աթանաս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Եվսեբիոս Եմեսացու, Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Սեբերիանոս Գաբաղացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Եվագրոս Պոնտացու, Կյուրեղ Երուսաղեմացու մեկնությունները, ճառերը և կանոնները, Արիստիդես Աթենացու, Հիպոլիտեսի և Եպիփան Կիպրացու ջատագովություններն ու հակաճառությունները, Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունն» ու «Քրոնիկոնը» (Ժամանակագրություն), Ափրահատ Զըգոնի, Զենոբ Ամդեցու, Այիթալա Եդեսացու քարոզներն ու թղթերը, Մարութա Նփրկերտցու վկայաբանական ժողովածուն, ինչպես նաև մի շարք ծիսական գրքեր՝ Պատարագամատույց, Ժամագիրք, Ճաշոց և այլն: Այս պարզ թվարկումն իսկ որոշակի պատկերացում է տալիս առաջին հայ թարգմանիչների ծավալած գրական գործունեության

հսկայական ընդգրկման և նրանց ստեղծած այն հոգևոր գանձարանի մասին, որի վրա պետք է հենվեր և որից իր ողջ գոյության ընթացքում պետք է սնվեր հայկական ինքնուրույն մատենագրությունը:

V դարի հայերեն թարգմանությունները կատարվել են բացառապես երկու լեզվից՝ ասորերենից և հունարենից, ընդ որում ասորերենից կատարված թարգմանությունները ժամանակով նախորդել են հունարենից կատարված թարգմանություններին, թեև իրենց ընդգրկմամբ և ծավալով բավականին զիջում են վերջիններիս: Ասորերենից և հունարենից կատարված թարգմանություններն իրենց լեզվամտածողությամբ, ոճով և բառապաշարով նկատելիորեն տարբերվում են իրարից, որ հիմք է տվել որոշ հետազոտողների V դարում զանազանել թարգմանական երկու դպրոց՝ ասորական և հունական: Սակայն պատմագիրների կողմից հաճաստված այն փաստը, որ միևնույն հեղինակները՝ Սահակ Պարթևը, Եզնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին և ուրիշներ, թարգմանություններ են կատարել և՛ հունարենից, և՛ ասորերենից, ավելորդ է դարձնում նշման հարցադրումը: Իսկ հունարենից և ասորերենից կատարված թարգմանությունների աչքի ընկնող ոճական տարբերությունները բացատրվում են ոչ թե զանազան թարգմանական դպրոցների առկայությամբ, այլ այդ երկու լեզուների որոշակի առանձնահատկություններով:

Դասական շրջանի գլխավոր թարգմանչական սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ոչ ստրկական վերարտադրությունը, որ հնարավորություն էր տալիս առանց մեղանչելու հայոց լեզվի օրինաչափությունների դեմ, ճշգրիտ կերպով արտահայտել բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները: V դարի հայկական թարգմանությունները, որպես կանոն, աչքի են ընկնում լեզվի հարստությամբ ու մաքրությամբ և սահուն, նրբաճաշակ ոճով:



Մի էջ Երզնկայի Ավետարանից
Մատենադարան, ձեռ. 10359 (1201 թ.)

Ուսումնասիրողներից շատերը հայ թարգմանական գրականության դասական շրջանը սովորաբար սահմանափակում են 405—460-ական թվականներով առաջնորդվելով այսպես կոչված ոսկեդարյան հայերենի գործածության ընդունված շրջանակներով: Սակայն իրականում դասական բնույթի թարգմանությունները շարունակել են կատարվել ոչ միայն ընդհուպ մինչև V դարի վերջը, այլև ամենայն հավանականությամբ գոյատևել են նաև հետագայում, հունաբան դպրոցի թարգմանություններին զուգահեռ:

Հայ թարգմանական գրականության զարգացման **երկրորդ շրջանում** եկեղեցական երկերն իրենց տեղը զիջում են ավելի տեսական՝ դավանաբանական և փիլիսոփայական բնույթի հուշարձանների թարգմանություններին, որ կապված էր հայ իրականության նոր պահանջմունքների՝ անտիկ փիլիսոփայության և գիտության նվաճումների յուրացման անհրաժեշտության հետ: Այդ շրջանում հունաբան դպրոցի ներկայացուցիչների ջանքերով հայերեն են թարգմանվում Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», Աֆտոնիոսի «Պիտոյից գիրքը», Թեոն Աղեքսանդրացու «Ճարտասանական վարժությունները», Պորփյուր Փյունիկեցու «Արիստոտելի ստորոգությունների ներածությունը», Արիստոտելի և Պլատոնի աշխատությունները, նորալատոնական իմաստասերների՝ Յամբլիքոսի և Դավիթ Անհաղթի փիլիսոփայական մեկնությունները, Գրիգոր Նյուսացու և Նեմեսիոս Եմեսացու մարդակազմական երկերը, Փիլոն Եբրայեցու, Իրենեոս Լուզդոնացու, Տիմոթեոս Կուզի, Դիոնիսիոս Արեոպագացու դավանաբանական և աստվածաբանական երկասիրությունները և այլն: Նշված թարգմանական հուշարձաններն ընդգրկում են գիտությունների դասակարգման միջնադարյան ըմբռնման բոլոր բնագավառները՝ քերականությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը, բնագիտությունը և աստվածաբանությունը, որ վկայում է հունաբան դպրոցի ներկայացուցիչ-

ների հետևողական և նպատակադրված գործունեության մասին:

Հայագիտության մեջ զգալի աշխատանք է կատարվել հունաբան դպրոցի թարգմանությունների դասակարգման և թրվագրման ուղղությամբ: Նորագույն դասակարգումը, որը պատկանում է փիլիսոփայության պատմաբան Ս. Արևշատյանին, և որտեղ հաշվի են առնված նախորդ հետազոտողների հիմնական եզրակացությունները, ներկայացնում է հունաբան թարգմանությունների հաջորդականության հետևյալ պատկերը. I ենթաշրջան (450—480 - ական թթ.), II ենթաշրջան (480 — 510 - ական թթ.), III ենթաշրջան (510 — 600 - ական թթ.), IV ենթաշրջան (610 — 710 - ական թթ.): Հունաբան դպրոցի հնագույն թարգմանությունն է համարվում Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», իսկ ժամանակով վերջինը Դիոնիսիոս Արեոպագացու աստվածաբանականփիլիսոփայական երկասիրությունների թարգմանություններն են:

Քերականական և փիլիսոփայական աշխատությունների թարգմանության ընթացքում բնականաբար ի հայտ է գալիս համապատասխան գիտական հասկացությունների հայերեն համարժեքների ստեղծման խնդիրը, որը հունաբան դպրոցի թարգմանիչները լուծում են արհեստական ճանապարհով բառապատճենումների և նորաստեղծ նախածանցների օգնությամբ: Դրանով հունաբան թարգմանությունները, Հայաստանում անտիկ մշակույթի տարածմանը և հայ միջնադարյան փիլիսոփայության ու գիտության զարգացմանը նպաստելուց բացի, նշանակալից դեր են խաղացել նաև հայոց լեզվի գիտական տերմինաբանության ստեղծման գործում: Այնպիսի նախածանցներ, ինչպիսիք են, *օրինակ*, *ապ*, *առ*, *գեր*, *ենթ*, *հակ*, *ստոր*, *մակ*, *տար*, *տրամ*, *փոխ*, *ներ* և այլն, որոնք այնքան սովորական են ժամանակակից հայերենում և այսօր էլ կազմում են նրա գիտական բառաստեղծման էական տարրը, առաջին ան-

գամ հունարենի նմանողությամբ շրջանառության մեջ են դրվել հունաբան դպրոցի գործիչների կողմից:

Հունաբան դպրոցի ներկայացուցիչները, ի տարբերություն դասական շրջանի թարգմանիչների, առաջնորդվում էին բնագրի բառացի, նյութական վերարտադրության սկզբունքով, այդ պատճառով նրանց իրագործած թարգմանություններին բնորոշ են խրթին ոճը և հայոց լեզվին անհարազատ շարադասական կառուցվածքները: Սակայն հայ մշակույթը, յուրացնելով հունաբան դպրոցի բերած դրական արդյունքները, ժամանակի ընթացքում կարողացավ ազատվել նրա բոլոր ծայրահեղություններից:

Ինչպես վերը նշեցինք, VIII—XI դարերը հայ թարգմանական գրականության պատմության մեջ բնորոշվում են որպես անկման դարեր: Դա բացատրվում է ոչ միայն այդ շրջանից մեզ հասած թարգմանությունների համեմատաբար փոքր քանակով, այլև միասնական թարգմանչական սկզբունքների ու նպատակների բացակայությամբ: Այնուամենայնիվ, այդ դարերը նույնպես տվել են թարգմանական գրականության որոշ արժեքավոր արգասիքներ, որոնցից մի քանիսը կարևոր դեր են կատարել հայ մշակույթի զարգացման պատմության մեջ: IX դարում, հավանաբար արաբերենից, հայերեն է թարգմանվել Նանա Ասորու «Հովհաննու ավետարանի մեկնությունը» աշխատությունը, իսկ IX—X դարերում Ատոմա վանքի վանահայր Գագիկի ձեռքով ասորերենից թարգմանվել են Մարութա Նփրկերտցու վարքը և Բարդիշոյի, Ներսեհի և Անանուհի վկայաբանությունները: X դարի թարգմանություններից արժանի են հիշատակության Հովհաննես Դամասկացու «Իմաստասիրության ներածությունը» աշխատությունը (թարգմանիչ՝ Բագրատ Մամիկոնյան) և Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանած բյուզանդական Հայսմավուրքը, որի հիման վրա հետագայում կազմվեցին հայկական Հայսմավուրքի զանազան

խմբագրությունները: XI դարում թարգմանության բնագավառում զգալի աշխատանք է կատարում Գրիգոր Մագիստրոսը՝ հունարենից հայերեն թարգմանելով Եվկլիդեսի «Երկրաչափությունը» և Պլատոնի «Ֆեդոն» և «Տիմեոս» տրամախոսությունները: Իսկ XI դարի վերջում և XII դարի սկզբում թարգմանչական լայն գործունեություն է ծավալում նրա որդին՝ հայոց կաթողիկոս Գրիգոր Վկայասերը, հունարենից և ասորերենից թարգմանելով տասնյակ վարքեր ու վկայաբանություններ և դրանցով հարստացնելով հայկական վարքագրական գրականությունը:

Կիլիկյան շրջանում դժվար է բացահայտել թարգմանչական գործունեության նույնպիսի հետևողականություն և նպատակադրված ընդգրկում, ինչպես դասական և հունաբան թարգմանությունների դեպքում, սակայն որոշ յուրահատկությունների առկայությունը հիմք է տալիս այն առանձնացնելու որպես հայ թարգմանական գրականության զարգացման մի նոր հանգրվան: Այս շրջանի ամենաբնորոշ երևույթը գործնական գիտելիքների՝ քաղաքացիական իրավունքի, բժշկության, գյուղատնտեսության նկատմամբ եղած հետաքրքրությունն է, որ բխում էր Կիլիկյան պետության անմիջական կարիքներից: Այդ կարիքները բավարարելու նպատակով XII—XIII դարերում ասորերենից, հունարենից, հին ֆրանսերենից և արաբերենից հայերեն են թարգմանվում Ասորահռոմեական դատաստանագիրքը, Բյուզանդական օրենքների ժողովածուն, «Անտիոքի ասիզները», Աբուսայիդի և Իշոխ քահանայի արևելյան աղբյուրների հիման վրա կազմված բժշկագիտական և մարդակազմական աշխատությունները, միջնադարի գյուղատնտեսական գիտելիքների հանրագիտարանը հանդիսացող «Վաստակոց գիրքը», Ֆարաջ Ասորու «Բժշկարան ձիոյ» անասնաբուժական ձեռնարկը և այլն: Ըստ մի թանկարժեք ձեռագրական հիշատակարանի՝ Կիլիկիայի Հեթում Ա թագավորի պատվերով

հայերեն են թարգմանվում նաև պողպատաձուլությանը, ձիադարմանությանը, թրագործությանը և աստղագիտությանը նվիրված գրքեր:

Մասամբ շարունակվում են նաև դասական շրջանի թարգմանական ավանդույթները. թարգմանվում են նորանոր վարքեր, վկայաբանություններ, ճառեր և մեկնություններ: Շարունակելով Գրիգոր Վկայասերի գործը՝ Ներսես Լամբրոնացին հին և նոր թարգմանությունների խմբագրությամբ կազմում է «Վարք հարանց» ժողովածուն և հունարենից թարգմանում Գրիգոր Պապի «Խտալիայում գործած զանազան հայրերի վարքի մասին» համաբնույթ գրվածքը: Լամբրոնացին կատարել է նաև եկեղեցական կանոնների, թղթերի, մեկնությունների ու ծիսական գրքերի մի շարք այլ թարգմանություններ: XII դարում թարգմանական գրականության բնագավառում աչքի ընկնող դեր են խաղում նաև Գրիգոր Գ Պաղաձունի կաթողիկոսը և նրա եղբայր Ներսես Շնորհալին:

Ասորիքի անմիջական հարևանությունը և Կիլիկիայում ասորի բնակչության առկայության հանգամանքը նպաստում են ասորական գրականության բազմաթիվ հուշարձանների, այդ թվում Հակոբ Սրճեցու տասնյակ ճառերի ու ներբողյանների, Միքայել Ասորու «Ժամանակագրության», Դանիել Սալախացու «Սաղմոսաց մեկնության», Եփրեմ Ասորու, Բարսումա ձգնավորի, Սարգիս զորավարի վարքերի ու վկայաբանությունների թարգմանությանը: Ասորական գրականության որոշ նմուշներ այս շրջանում հայերեն են թարգմանվում նաև հունարենից, ինչպես Եփրեմ Ասորու «Կտակը» և նրա ճառերից մի քանիսը:

Կիլիկիայում կիրառություն է գտնում թարգմանական գործունեության մի նոր եղանակ, որի սկզբնավորումը կապվում է Գրիգոր Վկայասերի անվան հետ. թարգմանությունները սովորաբար կատարվում են օտար և հայ հեղինակների համագործակցու-

թյամբ, այսինքն հույն և ասորի թարգմանիչները կատարում են բնագրերի տողացի թարգմանությունը, իսկ հայ խմբագիրներն իրագործում են դրանց գրական վերամշակումը: Այդ պատճառով հայերեն թարգմանությունները բնագրական տեսակետից երբեմն բավականին հեռանում են իրենց նախորինականներից և փաստորեն դառնում նրանց ազատ փոխադրությունը:

Կիլիկյան շրջանի թարգմանություններն աչքի են ընկնում ևս մի ուշագրավ առանձնահատկությամբ. եթե եկեղեցական գրականության հուշարձանները՝ վարքերը, վկայաբանությունները, ճառերն ու մեկնությունները թարգմանվում են դասական գրաբարով, ապա գործնական կիրառության համար նախատեսված թարգմանությունները, ինչպես՝ «Անտիոքի ասիզները», «Վաստակոց գիրքը», Ֆարաջ Ասորու «Զիաբուծարանը», բժշկագիտական աշխատությունները և այլն, կատարվում են ժողովրդին հասկանալի միջին հայերենով:

XIII դարում թարգմանական գործի որոշ աշխուժացում է նկատվում նաև բուն Հայաստանի հյուսիսային նահանգներում, որոնք գտնվում էին վրաց պետականության ազդեցության ոլորտում: Սիմեոն Պղնձահանեցու ջանքերով վրացերենից հայերեն են թարգմանվում Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապք աստվածաբանականք», Հովհաննես Դամասկացու «Աղբյուր գիտության», Հովհաննես Սինայեցու «Սանդուղք աստվածային ելից» երկերը, ինչպես նաև «Վրաց պատմությունը» և «Հունական ժամագիրքը»: Վրացահավան հայերի միջավայրի գրական այս արտադրանքները, սակայն, իրենց բնույթով և հետապնդած նպատակներով որոշակիորեն տարբերվում են կիլիկյան թարգմանություններից և կապվում հաջորդ միաբարական շրջանի թարգմանությունների հետ:

Միաբարական միջավայրի թարգմանությունները, ի տարբերություն նախորդ շրջանների թարգմանությունների, որոնք բխում էին

հայոց հոգևոր մշակույթի ներքին պահանջներից, օտարների նախա-
ձեռնությամբ և օտար նպատակների ծառայելու կոչված ձեռնար-
կում էին հանդիսանում: Անժխտելի է, իհարկե, որ միարարական
շարժման ծագումը Հայաստանում կապված էր քաղաքական դրդա-
պատճառների՝ պապականության օգնությամբ հայ ժողովրդի
ազատագրման սին երազանքների հետ: Բուև գործունեության մեջ,
սակայն, միարարությունը ոչ միայն որևէ դեր չկատարեց այդ
նպատակի իրականացման ուղղությամբ, այլև պատճառ հանդիսա-
ցավ հայ ժողովրդի մի զգալի հատվածի օտարացմանը: Այնու-
ամենայնիվ, չնայած իր խաղացած խիստ բացասական գործնական
դերին, միարարական շարժումը ուշադրության արժանի որոշ հետք
է թողել հայ մշակույթի, մասնավորապես բնագիտական և փիլի-
սոփայական մտքի զարգացման պատմության մեջ:

Հայաստանում միարարական շարժման մշակութային կենտ-
րոններն էին Արտազ գավառի Ծործոր բնակավայրում հիմնադր-
ված հայ-ֆրանցիսկյան և Նախիջևանի Քննա գյուղի հայ-դո-
մինիկյան վանքերը, որտեղ քարոզչական և գրական բուռն գոր-
ծունեություն են ծավալել եվրոպացի միսիոներներից Ֆրա Պոն-
ցիուսը, Բարթոլոմեոս Բոնոնացին կամ Մարաղացին և Պետրոս
Արագոնացին, իսկ հայ միարարներից՝ Հովհաննես Ծործորեցին,
Հովհաննես Քոնեցին և Հակոբ Քոնեցին: Հիմնականում այս անձ-
նավորությունների ջանքերով շատ կարճ ժամանակի ընթացքում,
XIV դարի 20—40 -ական թվականներին, լատիներենից հայերեն
են թարգմանվում մեծ թվով ծիսական, քարոզչական, աստվածա-
բանական և մեկնողական գրքեր, ինչպես նաև մի շարք փիլիսո-
փայական և գիտական աշխատություններ:

Միարարական միջավայրի կարևորագույն թարգմանություն-
ներն են Զիլբերտոս Պոռետացու «Վեց սկզբունքների մասին»,
Ալբերտոս Մեծի «Աստվածաբանական ճշմարտության համառոտ

շարադրանք», Թովմա Աքվինացու «Եկեղեցական խորհուրդների մասին», «Աստվածաբանության ամփոփում» և «Առաքինությունների գիրք», Նիկողայոս Լյուրացու «Հովհաննու ավետարանի մեկնություն» և «Եբրայեցիների թղթի մեկնություն», Բարթոլոմեոս Մարաղացու «Վեցօրյա արարչության մասին», «Պիալեկտիկայի համառոտ շարադրանք» և «Քարոզգիրք», Պետրոս Արագոնացու «Հռոմեական եկեղեցու կանոնների դատաստանագիրք», «Արիստոտելի Ստորոգությունների համառոտ վերլուծություն», «Պերիարմենիաս գրքի վերլուծություն», «Պորփյուրի ներածության համառոտ շարադրանք» աշխատությունները և այլն: Հայ միարարներն ունենում են նաև իրենց պատմագիրը՝ հանձին Ներսես Պալիանենցի, որը 1340-ական թվականներին Կաթողիկ եկեղեցու՝ ժամանակավորապես Ֆրանսիայի Ավինյոն քաղաքում հաստատված հոգևոր կենտրոնում էական լրացումներով լատիներենից հայերեն է թարգմանում Մարտինոս Օպավիացու «Գավազանագիրքը»՝ Հռոմի պապերի գահակալության ամփոփ շարադրանքը:

Վերոհիշյալ թարգմանությունները, սակայն, չեն լճանում միարարական միջավայրի նեղ շրջանակներում, այլ շուտով դուրս գալով նրա սահմաններից, թափանցում են բուն հայկական ուսումնական կենտրոնները՝ նպաստելով իմաստասիրական և բնագիտական գրականության հետագա զարգացմանն ու Հայաստանում եվրոպական սխոլաստիկայի բովով անցած անտիկ գիտության նվաճումների տարածմանը: Մասնավորապես անուրանալի է նըրանց բարերար ազդեցությունը հայ փիլիսոփայության Գլաձոր — Տաթևյան դպրոցի վրա, որի հոգևոր առաջնորդները՝ Եսայի Լեչեցին, Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին, վճռական ու անզիջում պայքար մղելով կաթողիկոսության աղետաբեր գաղափարների դեմ, միաժամանակ կարողացան լայնախոհաբար գնահատել և յուրաց-

նել միարարական միջավայրի դրական գիտա - մշակութային արգասիքները:

XV — XVI դարերի անկման ժամանակներից հետո հայ թարգմանական գրականությունը թևակոխում է իր զարգացման վերջին ուշմիջնադարյան շրջանը: Թարգմանական գործի զգալի աշխուժացումը, որ նկատվում է XVII — XVIII դարերում, պայմանավորված էր հայկական գաղթավայրերի աճող կենսունակությամբ, միջագային առևտրի մեջ հայ վաճառականների խաղացած նշանակալից դերով և հայ մշակույթի ընդհանուր վերելքով: Հայ ժողովուրդը Արևելքի ժողովուրդների մեջ թերևս առաջինն էր, որ թարգմանությունների միջոցով հաղորդակից էր դառնում եվրոպական գիտության՝ աշխարհագրության, մաթեմատիկայի, քերականության, բնագիտության նորագույն նվաճումներին: Տպագրական գործի ծավալումը հնարավորություն էր տալիս այդ գիտելիքներն անմիջապես տարածելու գրասեր հասարակության մեջ, որ անշուշտ, նպաստում էր հայ մշակույթի զարգացմանը և ժողովրդի կրթական մակարդակի բարձրացմանը:

XVII դարում հայ թարգմանական գրականության ասպարեզում աչքի ընկնող դեր են կատարել Հովհաննես Անկյուրացին, Ստեփանոս Լեհացին, Ոսկան Երևանցին և Հովհաննես Հոլովը: Առաջինի կողմից հայերեն են թարգմանվել «Լատինական աշխարհացույցը», Պետրոս Ապիանի «Կոսմոգրաֆիան», «Պտղոմեոսի աշխարհացույցը», «Աշխարհների պատմությունը», «Մարմնազնություն», «Քարերի մասին» աշխատությունները և այլն: Ստեփանոս Լեհացու թարգմանություններից հիշատակության արժանի են Հովսեփոս Փլաբիոսի «Հրեական պատերազմի պատմությունը», Արիստոտելի «Մետաֆիզիկան», Պրոկոլ Դիագոխոսի «Պատճառների գիրքը», Դիոնիսիոս Արեոպագացու չորս երկասիրությունները, որոնք արդեն մեկ անգամ հունարենից հայերեն էին թարգմանվել VIII դարի

		կրթ. տես. և արհ. արհ.	կրթ. տես. և արհ. արհ.	կրթ. տես. և արհ. արհ.	կրթ. տես. և արհ. արհ.	կրթ. տես. և արհ. արհ.	կրթ. տես. և արհ. արհ.	կրթ. տես. և արհ. արհ.	կրթ. տես. և արհ. արհ.
առարկա և անհատականության հարցը	246	ժգ	հղ	ԼԳ	ժա	ԻՃ	արհ. տես. և արհ. արհ.	246	ժգ
հարցի պատճառները և պիտ. հարց (ձեռ. պիտ. հարցի հարց)	247	ժգ	հե	ԼԳ	ժգ	Ճ	հարցի պատճառները և պիտ. հարց (ձեռ. պիտ. հարցի հարց)	247	ժգ
	248	ժգ	ԻԸ	ԼԵ	ժգ	Ճ		248	ժգ
	249	ժգ	ԻՃ	ԼԼ	ժգ	ՃԲ		249	ժգ
	250	ժգ	Լ	ԼԵ	ժգ	ՃԳ		250	ժգ
1) Բնական հարցի պատճառները և պիտ. հարց (ձեռ. պիտ. հարցի հարց)	251	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ	1) Բնական հարցի պատճառները և պիտ. հարց (ձեռ. պիտ. հարցի հարց)	251	ժգ
	252	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		252	ժգ
	253	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		253	ժգ
	254	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		254	ժգ
	255	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		255	ժգ
	256	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		256	ժգ
	257	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		257	ժգ
	258	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		258	ժգ
	259	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		259	ժգ
	260	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		260	ժգ
	261	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		261	ժգ
	262	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		262	ժգ
	263	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		263	ժգ
	264	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		264	ժգ
	265	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		265	ժգ
	266	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		266	ժգ
	267	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		267	ժգ
	268	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		268	ժգ
	269	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		269	ժգ
	270	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		270	ժգ
	271	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		271	ժգ
	272	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		272	ժգ
	273	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		273	ժգ
	274	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		274	ժգ
	275	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		275	ժգ
	276	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		276	ժգ
	277	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		277	ժգ
	278	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		278	ժգ
	279	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		279	ժգ
	280	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		280	ժգ
	281	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		281	ժգ
	282	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		282	ժգ
	283	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		283	ժգ
	284	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		284	ժգ
	285	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		285	ժգ
	286	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		286	ժգ
	287	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		287	ժգ
	288	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		288	ժգ
	289	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		289	ժգ
	290	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		290	ժգ
	291	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		291	ժգ
	292	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		292	ժգ
	293	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		293	ժգ
	294	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		294	ժգ
	295	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		295	ժգ
	296	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		296	ժգ
	297	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		297	ժգ
	298	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		298	ժգ
	299	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		299	ժգ
	300	ժգ	ԼԵ	ԼԵ	ժգ	ՃԳ		300	ժգ

Մի էջ եվսեֆիոս Կեսարացու Քրոնիկոնից
Մատենադարան, ձեռ. 1904 (XIII դ.)

սկզբում Ստեփանոս Սյունեցու ձեռքով, ինչպես նաև «Հայելի վարուց» ժողովածուն: Ուշագրավ է, որ ի տարբերություն Ստեփանոս Լեհացու մյուս թարգմանությունների, որոնք կատարվել են լատիներենից, «Հայելի վարուց» ժողովածուն հայերեն է թարգմանվել լեհերեն բնագրից: Ոսկան Երևանցին լատիներենից հայերեն է թարգմանել «Քերականության արվեստ», «Տրամաբանության տարերք» աշխատությունները, մի փիլիսոփայական բառարան, ինչպես նաև աստվածաշնչական որոշ գրքեր՝ Աստվածաշնչի 1666 թվականի իր ձեռնարկած հրատարակությունն ամբողջացնելու համար: Հովհաննես Հոլովի կարևոր թարգմանություններն են՝ «Դավթի հոգենվագ սաղմոսների պարզաբանություն», «Հոգևոր պարտեզ», «Զորությունների նորագույն ծաղիկ», Թովմա Կեմպացու «Քրիստոսին հետևելու մասին», Ժան - Բատիստ Բորտայի «Բնագնության գիրք» աշխատությունները: Նրան է վերագրվում նաև 1675 թվականին Մարսելի Ոսկանյան տպարանում հրատարակված «Համարողության արհեստ» գրքի թարգմանությունը: Որոշ առումով թարգմանություններ, ավելի ճիշտ փոխադրություններ պետք է համարել նաև XVII դարի վերջում Ամստերդամում գործող Վանանդեցիների տպարանի հրատարակած գրքերի զգալի մասը:

XVIII դարում թարգմանական գործը կենտրոնանում է հիմնականում երկու քաղաքներում՝ Վենետիկում, որտեղ գրական - մշակութային բուռն գործունեություն են ծավալում Մխիթարյան հայրերը, և Պոլսում, որտեղ կրթական - լուսավորական լայն ծրագրեր են իրագործվում ինչպես կաթոլիկ հայերի միջավայրում, այնպես և Հայոց պատրիարքարանի հովանու ներքո: Դարավերջին բազմաթիվ թարգմանական հուշարձաններ են հրատարակվում նաև հայ տպագրության մյուս կենտրոններում՝ Տրիեստում, Մադրասում, Պետերբուրգում և Նոր Նախիջևանում: XVIII դարի թարգմանիչներից արժանի են հիշատակության Մխիթար Սեբաս-

տացին, Պետրոս Թիֆլիսեցին, Հովնան Թոխաթեցին, Պետրոս Մուխուպյանը, Աթանաս Մերասյանը, Ղուկաս Խարբերդացին, Վերթանես Ասկերյանը, Մարգար Շահրիմանյանը և ուրիշներ: Հայ հնատիպ գրքի ցանկացած մատենագիտություն կարող է որոշակի պատկերացում տալ նշված և այլ թարգմանիչների ծավալած գրական գործունեության մասին, ուստի ավելորդ է այստեղ մեկառմեկ թվարկել նրանց հրատարակած բազմաթիվ թարգմանական հուշարձանները: Անհրաժեշտ է նշել միայն, որ XVII և մանավանդ XVIII դարում գիտա - գործնական գրականության կողքին մեծ տեղ են զբաղեցնում կրոնա - դավանաբանական բնույթի հայերեն թարգմանությունները, որոնք կատարվում էին եվրոպացի քարոզիչների կամ կաթոլիկացած հայերի կողմից՝ հայ հասարակության մեջ կաթոլիկական գաղափարներ տարածելու նպատակով:

Թարգմանական գրականության ծաղկման նշված հինգ շրջաններից յուրաքանչյուրն, ինչպես տեսանք, որոշակի հետք է թողել հայ մատենագրության պատմության մեջ, այս կամ այն չափով պայմանավորելով նրա զարգացման ընթացքը և բազմակողմանիորեն հարստացնելով հայ ընթերցողի գիտելիքների պաշարը:

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Հայտնի է, որ հայոց եկեղեցին սրբացրել է թարգմանիչներին, ամեն տարվա հոկտեմբեր ամսին նշելով նրանց հիշատակի օրը, որը վաղուց ի վեր վերածվել է համազգային տոնի: Նախորդ շարադրանքից դժվար չէ կռահել, թե ինչ հսկայական վաստակի շնորհիվ են նրանք արժանացել այդպիսի պատվի: Միջնադարում, ըստ երևույթին, միանգամայն գիտակցված է եղել այն փաստը, որ մանավանդ V դարի թարգմանիչները մշակութային ծառայու-

թյունից բացի և դրանից ավելի վճռական դեր են կատարել հայոց եկեղեցու ինքնուրույնության ապահովման և հայ ժողովրդի ազգային դեմքի պահպանման գործում: Հիրավի, եթե հայ ժողովրդի հոգևոր առաջնորդները չստեղծեին հայոց գիրը և դրա շնորհիվ չթարգմանեին Աստվածաշունչն ու անհրաժեշտ ծիսական գրականությունը, ապա եկեղեցին ստիպված պետք է լիներ իր արարողություններն իրականացնել օտար լեզուներով՝ հունարենով կամ ասորերենով, ինչպես վարվում էր IV դարում: Իսկ դա արդեն նոր պայմաններում, երբ հայ ժողովուրդը կորցրել էր իր պետականությունը, կարող էր մահացու վտանգ դառնալ նրա ազգային ինքնուրույնության պահպանման ճանապարհին: Գրերի գյուտով, Աստվածաշնչի թարգմանությամբ ու հայալեզու եկեղեցական արարողությամբ հող նախապատրաստվեց ազգային մշակույթի ստեղծման և հետագա դարերի ճակատագրական ալեկոծություններին դիմագրավելու համար:

Թարգմանիչների դասը հայոց եկեղեցում առաջացել է դեռևս գրերի գյուտից առաջ, հավանաբար IV դարի սկզբներին, Հայաստանի քրիստոնեացումից անմիջապես հետո: Նրանց պարտականությունն էր հունարեն և ասորերեն լեզուներով կատարվող եկեղեցական արարողությունները բանավոր կերպով թարգմանել հայերենի և մատուցել ժողովրդին: Այդպիսի թարգմանությունը, բնականաբար, ոչ թե բնագրի ճշգրիտ վերարտադրության, այլ նրա բացատրության, մեկնության բնույթ պիտի կրեր: Ուստի զարմանալի չէ, որ հայ մատենագրության մեջ թարգմանիչ և թարգմանել բառերը հաճախ գործածվել են նաև մեկնիչ և մեկնել իմաստներով:

Հայոց գրերի գյուտից հետո թարգմանիչների եկեղեցական դասը կորցնում է իր երբեմնի նշանակությունը և վերակառուցվում նոր պայմանների համեմատ: Նախկին թարգմանիչները հեշտությամբ փոխում են իրենց աշխատանքի եղանակը և անցնում գը-

րավոր թարգմանության: Պատրաստի թարգմանիչների գոյությունը հնարավորություն է տալիս գրերի գյուտից անմիջապես հետո ձեռնարկել թարգմանական լայն ծրագրերի իրականացմանը: Մաշտոցն ու Սահակն այդ նպատակով իրենց աշակերտներից մի քանիսին ուղարկում են ժամանակի հունական և ասորական մշակույթի նշանավոր կենտրոնները՝ Եդեսիա, Կոստանդնուպոլիս և Ալեքսանդրիա: Ահա, օրինակ, ինչպես է Կորյունը նկարագրում երկու բազմաջան թարգմանիչների առաքելությունը դեպի Եդեսիա և Բյուզանդիոն. «Պատահեց դարձյալ, — գրում է նա, — որ նրանք [Մաշտոցն ու Սահակը] իրենց աշակերտներից երկու եղբայրների՝ Հովսեփին, որ վերևում հիշեցինք, և մի ուրիշին՝ Եզնիկ անունով, որ Այրարատյան գավառի Կողբ գյուղից էր, ուղարկեցին Ասորոց կողմերը, Եդեսիա քաղաքը, որպեսզի նրանց սուրբ հայրերի ավանդությունները ասորերեն լեզվից հայերենի դարձնեն ու գրեն: Իսկ թարգմանիչները հասան այնտեղ, ուր ուղարկվեցին, և նրանց պատվերը կատարելով ուղարկեցին պատվական հայրերին, [իսկ իրենք] անցան, գնացին հունական կողմերը, ուր և ուսանելով ու հմտանալով կարգվեցին հելլենական լեզվից թարգմանիչներ»: Բյուզանդիոնում նրանց են միանում ևս երկու թարգմանիչներ՝ ինքը՝ Կորյունը և մի ուրիշը՝ Ղևոնդ անունով: Կատարելով իրենց հանձնարարված գործը, այս չորս թարգմանիչները, վերցրած իրենց թարգմանություններն ու մի շարք հունարեն բնագրեր, վերադառնում են Հայաստան և շարունակում թարգմանական գործունեությունը:

Թարգմանական նպատակով իրագործվող այս ուղևորությունները թելադրված էին մի շարք անհրաժեշտ հանգամանքներով: Ասորական և հունական հոգևոր կենտրոնների հարուստ գրադարանները հնարավորություն էին տալիս միանգամից և ծրագրված կերպով թարգմանել համեմատաբար շատ գրական հուշարձաններ:

Մանավանդ որ դա նյութական ծախսերի և ժամանակի խնայողության տեսակետից ավելի ձեռնտու էր, քան պատվիրել կամ ընդօրինակել օտար բնագրերի թանկարժեք մագաղաթյա ձեռագրեր, դրանք բերել Հայաստան և ապա միայն իրագործել նրանց թարգմանությունը: Այս դեպքում թարգմանիչները կզրկվեին նաև մի էական օժանդակությունից, որը մեր կարծիքով կարևոր դեր է խաղացել հնագույն հայկական թարգմանությունների բարձր մակարդակը ապահովելու գործում: Հայտնի է, որ միջնադարում գոյություն չունեին երկլեզվյան այնպիսի բառարաններ, առանց որոնց այսօր դժվար է պատկերացնել ժամանակակից մշակութային փոխըմբռնումը: Ուստի, հայ թարգմանիչները որքան էլ լավ տիրապետեին հունարեն կամ ասորերեն լեզուներին, միևնույն է, թարգմանության ընթացքում հաճախ պետք է կանգնեին անլուծելի դժվարությունների առաջ՝ օտարալեզու բնագրերի խրթին արտահայտությունների, երկիմաստ կամ անհասկանալի բառերի վերարտադրման տեսակետից: Այս դժվարությունները հաղթահարելու միակ միջոցը կենդանի բառարանների՝ հույն և ասորի վարդապետների օգնությունն էր, որը, բնականաբար, կարելի էր ստանալ նրանց միջավայրում: Ուստի զարմանալի չէ, որ Եզնիկի, Հովսեփի, Կորյունի ու Ղևոնդի ուղևորությունից հետո, V դարում կազմակերպվում է թարգմանիչների ևս մի երթ, այս անգամ արդեն դեպի Ալեքսանդրիա, որի մասնակիցների թվում է գտնվում նաև պատմահայր Մովսես Խորենացին: Հավանաբար, թարգմանական գործունեության նույն եղանակով են աշխատել նաև հունաբան դպրոցի ներկայացուցիչները, որոնք, ինչպես հայտնի է, իրենց կրթությունն ստացել են Կոստանդնուպոլսում, Աթենքում, Անտիոքում ու Ալեքսանդրիայում և այդ քաղաքներում էլ, ըստ երևույթին, իրագործել են իրենց թարգմանությունները:

Թարգմանական գրականության ծաղկման հաջորդ երկու շրջաններում, այսինքն՝ կիլիկյան և միարարական միջավայրում, հայ թարգմանիչների գործունեության մեջ էական փոփոխություն է տեղի ունենում: Ինչպես հայտնի է, Կիլիկիայում հայերի կողքին ապրում էին զգալի թվով հույներ և ասորիներ, որոնցից շատերը ժամանակի ընթացքում տիրապետելով հայերենին, աստիճանաբար ներգրավվում են հայոց մշակութային կյանքի մեջ: Դրանով հնարավորություն է ստեղծվում թարգմանական գործի ծանրության մի մասը դնել հույն և ասորի թարգմանիչների ուսերին: Նրանք սովորաբար կատարում են հունական և ասորական բնագրերի հայերեն բառացի թարգմանությունները, որոնք այնուհետև սըրբագրվում և հղկվում են հայ խմբագիրների կողմից: Ի դեպ, խմբագիրների դերում հիմնականում հանդես են գալիս ժամանակի հայ հոգևոր կյանքի խոշորագույն ներկայացուցիչները՝ Գրիգոր Վկայասերը, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Վարդան Արևելցին և ուրիշներ: Հայ և օտար թարգմանիչների այսպիսի համագործակցությունը հավաստված է բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններով: Այսպես, օրինակ, Սարգիս զորավարի վկայաբանության հիշատակարանում նշված է. «Սույն ճառը ասորերենից հայերեն է թարգմանվել ասորի կրոնավոր Միքայել քահանայի ձեռքով, և հնարավորին չափով հարմարեցվել է մեր լեզվին Ներսես եպիսկոպոսի՝ Հայոց Գրիգորիս կաթողիկոսի եղբոր խմբագրությամբ, հայոց ՈՒԷ (1158) թվականին»: Իսկ XIII դարի պատմագիր Վարդան Արևելցին Միքայել Ասորու «ժամանակագրության» հայերեն թարգմանության հիշատակարանում հաղորդում է հետևյալը. «Աստծու մշտնջենավոր որդու գալստյան 1248 և Հայոց թըվականության ՈՂԷ (1248) տարում այս գիրքը ասորերենից հայերեն թարգմանվեց. . . սրբասունդ քահանա Իշոխի կողմից, որը տիրապետում էր բժշկական արվեստի հմտությանը, և որին Հիսուսը

պիտի հատուցի իր վաստակի փոխարեն: Այլ և ես՝ տառապած հոգի Վարդան վարդապետս, որ իմ կարողության չափով ջանք թափեցի այս գրքի վրա, իրավունք ունեմ հավատալու և հուսալու Աստծու գթությանը», և այլն:

Նույն եղանակով են կատարվել նաև միարարական միջավայրի թարգմանությունները: Հայաստանում գործող եվրոպացի միսիոներները, բնականաբար, այնքան լավ չէին տիրապետում հայերենին, որպեսզի կարողանային պատշաճ մակարդակի թարգմանություններ կատարել լատիներենից: Եվ այս խնդրում նրանց մեծ օգնություն են ցույց տալիս հայ միարար վարդապետները: Ծործորի հայ - ֆրանցիսկյան միաբանությունում համատեղ աշխատանքով մի շարք թարգմանություններ են իրագործում եվրոպացի միսիոներ Ֆրա Պոնցիուսը և հայ վարդապետ Իսրայելը: Իսկ Քռնայի միարարական կենտրոնում այդ բնագավառում բեղմնավոր գործունեություն են ծավալում մի կողմից դոմինիկյան միաբաններ Բարթոլոմեոս Մարաղացին և Պետրոս Արագոնացին, մյուս կողմից հայ վարդապետներ Հովհաննես Քռնեցին և Հակոբ Քռնեցին: Ի դեպ, Հովհաննես Քռնեցու և Բարթոլոմեոսի համագործակցության ըսկըզբնական շրջանում, երբ վերջինս գտնվում էր Մարաղայում և դեռևս չէր տիրապետում հայերենին, հարկ է լինում դիմել նույնիսկ պարսիկ թարգմանչի միջնորդությանը: Այդ ճանապարհով են հայերեն թարգմանվել, օրինակ, Թովմա Աքվինացու «Եկեղեցու խորհուրդների մասին» աշխատությունը և մի շարք այլ բնագրեր: Կիլիկյան շրջանի թարգմանիչների նման, միարարական միջավայրի թարգմանիչները նույնպես համատեղ գրական աշխատանքի մասին տեղեկություններ են թողել իրենց թարգմանություններին կցված հիշատակարաններում: Այսպես, Պետրոս Արագոնացու և Հակոբ Քռնեցու թարգմանած «Ընդդեմ հերետիկոսների» աշխատությանը կցված է հետևյալ տեղեկությունը. «Թարգմանված է

Քռնայի վանքում Ֆրա Պետրոսի ձեռքով և Ֆրա Հակոբոսի միջնորդությամբ»:

Տարբեր ազգերի թարգմանիչների համագործակցության այս երևույթը, սակայն, չպետք է համարել հայկական մշակույթի առանձնահատկությունը, քանի որ այն դրսևորվել է նաև ուրիշ ժողովուրդների հոգևոր կյանքում: Այսպես, XII դարում արաբական փիլիսոփայական և բնագիտական երկերի թարգմանության ուղղությամբ Իսպանիայում ծավալված գրական լայն գործունեությունն իրականացրել են տեղի արաբալեզու (հիմնականում հրեա) գիտնականները և լատիներենին տիրապետող եվրոպացի վարդապետները, պարարտ հող նախապատրաստելով եվրոպայում փիլիսոփայության և գիտության հետագա զարգացման համար:

Ինչպես կարելի էր նկատել, XI — XIV դարերի հայկական թարգմանությունների հանգամանքների վրա բավական լույս են սփռում նրանց կցված համառոտ կամ ընդարձակ հիշատակարանները, որոնցից, դժբախտաբար, գուրկ են հնագույն շրջանի թարգմանությունները: Հիշատակարանները ոչ միայն կարևոր տեղեկություններ են հաղորդում թարգմանության նախօրինակի և ժամանակի, թարգմանիչների անձնավորության և ազգության մասին, այլև երբեմն պարզում են թարգմանության ընթացքում ծագած դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղղությամբ թափված ջանքերը: XI — XII դարերի թարգմանությունների հիշատակարաններից և ժամանակակիցների վկայություններից մասնավորապես մեր առջև է հառնում անխոնջ թարգմանիչ Գրիգոր Վկայասերի ցայտուն կերպարը, որի թարգմանական գործունեությունը հետևյալ խոսքերով է գնահատված XIII դարի մի աղբյուրում. «Նա նորից լուսավորեց ու պայծառացրեց հայոց եկեղեցին սուրբ Լուսավորչի և Սահակ ու Մեսրոպ սուրբ թարգմանիչների նման, քանզի թարգմանության շնորհք ունենալով, միշտ քննում էր բոլոր ազգերի գրը-

քերը, և պիտանիները, որոնք պակասում էին մեր լեզվում, ջանասիրաբար թարգմանում էր անձամբ կամ այլ հմուտ մարդկանց օգնությամբ»:

XIII դարի մի այլ աղբյուր՝ Կիրակոս Գանձակեցու «Պատմությունը», Գրիգոր Վկայասերին անվանելով «իմաստուն և առաքինի մարդ», ավելացնում է. «Այս սքանչելի հայրապետը թարգմանել է վկայաբանական և ներբողական բազմաթիվ ճառեր հունարենից և ասորերենից»: Նրա թարգմանական գործունեությունն արձագանք է գտել նաև հայ միջնադարյան բանաստեղծության մեջ, ինչպես օրինակ, Ներսես Շնորհալու «Վիպասանություն» պոեմում:

Երկորդ Մեսրոպ մեզ երևեալ,
Զգիրս բազումս թարգմանեալ,
Առ ի յունաց և յասորոց
Ճառս սրբոց վերաբերեալ . . .

Գրիգոր Վկայասերի ծավալած բուռն թարգմանական գործունեության պերճախոս վկայությունն է նրա կյանքի հետևյալ դրվագը, որ նկարագրված է Ներսես Շնորհալու վարքում: Պաշտոնական այցով ժամանելով Կոստանդնուպոլիս, Գրիգորն օգտվում է առիթից և բյուզանդական կայսրից ու մայրաքաղաքի պատրիարքից թույլտվություն խնդրում որոշ ժամանակ մնալ քաղաքում և ուսումնասիրել այնտեղի ձեռագիր մատյանները: Կայսրը և պատրիարքը ոչ միայն տալիս են անխտիր բոլոր ձեռագրերից օգտվելու թույլտվությունը, այլև արքունիքի վրա են վերցնում Հայոց կաթողիկոսի և նրա ուղեկիցների ապրուստի հոգսը: Գրիգորը փութով լքվում է գործի և կարճ ժամանակի ընթացքում հունարենից հայերեն է թարգմանում բազմաթիվ վարքեր ու վկայաբանություններ, կրոնական տոներին նվիրված ներբողական ճառեր, եկեղեցու հայրերի

մի շարք գրվածքներ և այլն: Այդ թարգմանությունները նա տալիս է իր հետ եղող հմուտ և իմաստուն գրիչներին ու խմբագիրներին, որոնք անմիջապես դրանք խմբագրում են հայոց լեզվի կանոնների և ճարտասանական արվեստի պահանջների համեմատ: Երբ Գրիգորըն իրագործում է իր ծրագիրը, կասկածում է, որ հույները կարող են արգելել թարգմանված մատյանների դուրսբերումը մայրաքաղաքից, ուստի թարգմանություններով բեռնված իր ուղեկիցներին գաղտնի կերպով նավ է նստեցնում և ճանապարհում դեպի Պաղեստին: Մի քանի օրից նա հանգիստ հրաժեշտ է տալիս կայսրին և հետևում նրանց: Ինչպես տեսնում ենք, հանուն թարգմանված մատյանների փրկության, Գրիգոր Վկայասերը, անշուշտ կասկածի որոշ հիմք ունենալով, ստիպված է լինում նույնիսկ խորամանկության դիմել:

Եվ ոչ միայն Գրիգոր Վկայասերը, այլև ուրիշ հայ թարգմանիչներ իրենց գրական աշխատանքում հաճախ հանդիպել են բազմաթիվ դժվարությունների և մեծ ճիգերով կարողացել են հաղթահարել դրանք: Ահա թե ինչպես է Արեթաս Կեսարացու «Հովհաննու Հայտնության մեկնության» հայերեն բնագրի հիշատակարանում ներսես Լամբրոնացին նկարագրում այդ հուշարձանի թարգմանության ուղղությամբ իր թափած ահռելի ջանքերն ու տքնաջան պրպտումները. «Ընթերցելով Հովհաննու Հայտնությունը, — գրում է նա, — ես տագնապում էի իմ հոգում, քանի որ չգիտեի սքանչելի խոսքերի վերլուծությունը, և այսուհանդերձ փնտրելով նրա մեկնությունը մեր լեզվով՝ չգտա: Դրանից հետո ինձ վիճակվեց գնալ մեծն Անտիոք և մտքումս բորբոքված այս տենչանքով շրջել այնտեղի հունական ու ֆրանկական վանքերում: Եվ փնտրտելով, այդ քաղաքի սուրբ Պողոս հռչակավոր վանքի գրքերի մեջ գտա երկու մեկնիչների կազմած Հայտնության մեկնությունը լոմբարդական բարբառով ու գրով, որ գործածում են ֆրանկները: Եվ փա-

փագելով թարգմանել, մարդ չգտա, որ կարողանար այդ լեզվից հայերենի վերածել: Ուստի դուրս գալով քաղաքից դեպի հյուսիսային կողմի լեռներում գտնվող հունական վանքերից մեկը, որ կոչվում էր Բեթիաս, իմ ցանկացածը կնքված գտա Բասիլ անունով մի մեկուսացած ճգնավորի մոտ հունարեն լեզվով ու գրով, ճշգրիտ և վայելուչ, որ պատկանել էր այդ քաղաքի Աթանաս պատրիարքին: Եվ բարեմիտ մարդուց աղաչանքով խնդրելով, գիրքը վերցրած փութացի հայրապետական նստավայրը, իմ տեր կաթողիկոս սուրբ Գրիգորիոսի մոտ: Վերջինս, տեղեկանալով, չափազանց ուրախացավ և պատվիրեց թարգմանել Հերապոլսի մետրապոլիտ Կոստանդինի օգնությամբ, որն ապրում էր այնտեղ՝ սուրբ հայրապետի հովանու ներքո: Եվ Աստծու ու սուրբ տիրոջ օժանդակությամբ նա սկսեց թարգմանել, իսկ ես՝ գրել, որով Հայոց եկեղեցու ուսումնասեր մանուկներին վերընծայեցինք այս սքանչելի և աստվածային Հայտնության մեկնությունը»:

Հետագա դարերում հայ թարգմանիչների աշխատանքի բընույթը նորից էական փոփոխություններ է կրում, քանի որ թարգմանական գործը հիմնականում ծավալում է գտնում հայկական գաղթավայրերում, մասնավորապես հայ տպագրության կենտրոններում, և թարգմանիչների դերում սովորաբար հանդես են գալիս ժամանակի հայտնի տպագրիչները: Ապրելով օտար միջավայրում, նրանք հեշտությամբ տիրապետում են տեղական լեզուներին և իրենց թարգմանություններն արդեն իրագործում են մեծ մասամբ առանց այլազգի խմբագիրների օգնության: Ավելին, հայ թարգմանիչներն ուշ միջնադարում թարգմանություններ են կատարում ոչ միայն օտար լեզուներից դեպի հայերեն, այլև հակառակ ուղղությամբ, որ թելադրված էր հայ ժողովրդի կյանքի նոր պայմաններով:

XVII — XVIII դարերում հայկական գաղթավայրերի, մասնավոր-

րապես Անատոլիայի, Լեհաստանի և Ղրիմի քաղաքների հայ բնակչության մի զգալի մասը մոռացել էր իր մայրենի լեզուն և առօրյա գործունեության մեջ օգտվում էր թուրքերենից կամ ղփչաղերենից: Այդ պատճառով հայ ժողովրդի հոգևոր առաջնորդները նշված գաղթավայրերի հայ բնակչությանն օտարացումից փրկելու համար ստիպված էին հայերենից թուրքերենի ու ղփչաղերենի թարգմանել անհրաժեշտ կրոնական և աշխարհիկ գրվածքները, առանց որոնց անհնար էր հայկական գաղթօջախների ազգային - հոգևոր կյանքի գոյությունը: Այդպիսով ժամանակի ընթացքում ստեղծվում է հայկական տառերով գրառված թուրքերեն և ղփչաղերեն մի հըսկայական գրականություն, որը դառնում է հայ մշակույթի անքակտելի մի բնագավառը: Ընդ որում, թուրքերեն և ղփչաղերեն են թարգմանվում ոչ միայն բուն հայկական գրականության հուշարձանները, այլև նրանք, որոնք դարերի ընթացքում հայերեն էին թարգմանվել այլևայլ լեզուներից և դարձել հայկական մատենագրության էական տարրերից մեկը: Բացի հայատառ թուրքերեն և ղփչաղերեն գրականությունից, հայկական ձեռագրերում հանդիպում են նաև ոչ մեծ թվով հայատառ լատիներեն, պարսկերեն, արաբերեն, հունարեն, ասորերեն, ռուսերեն, լեհերեն և հունգարերեն բնագրեր: Մյուս կողմից, պատահում են նաև հատուկներտ հայերեն բնագրեր, գրի առնված արաբական, հունական և ասորական տառերով:

XVIII — XIX դարերում եվրոպայում մեծ հետաքրքրություն է առաջանում արևելյան ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի մշակույթի նկատմամբ: Հայազգի և օտար հայագետների ջանքերով լատիներեն, Ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն են թարգմանվում հայկական մատենագրության կարևորագույն հուշարձանները՝ Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Սեբեոսի, Հովհան

Մամիկոնյանի, Հովհաննես Դրասխանակերտցու, Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռհայեցու «Պատմությունները», Հովհան Մանդակունու և Հովհաննես Օձնեցու ճառերն ու դավանաբանական գրվածքները, Ներսես Շնորհալու թղթերն ու չափածո քերթվածքները և այլն: Սակայն այս թարգմանություններն իրենց բնույթով արմատապես տարբերվում են միջնադարյան թարգմանություններից, քանի որ հետապնդում են զուտ ճանաչողական և գիտական նպատակներ:

ՓՐԿՎԱԾ ՄԱՅՅԱՆՆԵՐ

Հնագույն և միջնադարյան հայերեն թարգմանությունների նըշանակությունը չի սահմանափակվում միայն հայագիտական նկատառումներով. նրանք մեծ արժեք են ներկայացնում նաև համաշխարհային մշակույթի ուսումնասիրման տեսակետից, որովհետև հունական և ասորական գրականության շատ հուշարձաններ, որոնց սկզբնագրերը կորած են, պահպանվել և ժամանակակից քաղաքակրթության սեփականությունն են դարձել բացառապես այդ թարգմանությունների շնորհիվ:

Այս առումով առաջին հերթին պետք է հիշատակել Եվսեբիոս Կեսարացու (մահ. 339թ.) երկու մասից բաղկացած «Ժամանակագրությունը (Քրոնիկոնը)», որը մեզ է հասել V դարի հայերեն թարգմանությամբ: Այն ընդգրկում է մի հսկայական ժամանակաշրջան՝ մարդկության նախապատմությունից մինչև մեր թվականության IV դարի սկիզբը, հաջորդաբար շարադրելով Ասորեստանի, Բաբելոնի, Եգիպտոսի, Հրեից, Մարաց և Պարսից թագավորություն-

ների, Մակեդոնական, Սելևկյան և Պտղոմեական հարստությունների, Հռոմեական կայսրության և մի շարք այլ քաղաքական միավորումների ու պետությունների ժամանակաբանությունը: Երկի առաջին մասը («Ժամանակագրութիւն պատմական») իրենից ներկայացնում է դեպքերի պատմողական շարադրանքը, իսկ երկրորդը («Քրոնիկոն կանոն»), որը հայտնի է նաև Հերոնիմոսի կատարած լատիներեն թարգմանությամբ, նույն դեպքերի համաժամանակյա ցանկը: Եվսեբիոսի «Ժամանակագրությունը» արդի գիտության համար մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն որպես IV դարի պատմագիտական մտքի ուշագրավ հուշարձան, այլև այն պատճառով, որ նրա մեջբերումների շնորհիվ մեզ են հասել հին աշխարհի մի շարք նշանավոր հեղինակների՝ Բերոսոսի, Աղեքսանդր Բագմավեպի և այլոց պատմական երկասիրությունների որոշ մասունքները: «Ժամանակագրության» հայերեն քննական բնագիրը հանդիպադիր լատիներեն թարգմանությամբ և հետագա հույն հեղինակների մոտ պահպանված հատվածների ընդգրկմամբ հրատարակել է Մկրտիչ Ավգերյանը 1818 թվականին: Հետաքրքիր է նշել, որ Եվսեբիոսի «Քրոնիկոնի» հայերեն բնագիրը երջանիկ պատահականությամբ մեզ է հասել ընդամենը մեկ ձեռագիր ընդօրինակությամբ, որն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Եթե կորած լիներ նաև նշված միակ ձեռագիրը, ապա այդ թանկարժեք պատմագրական հուշարձանն այսօր անհայտ պետք է մնար: V դարի 20-ական թվականներին, Մաշտոցի պատվերով ասորերենից հայերեն է թարգմանվել նաև Եվսեբիոս Կեսարացու մի այլ աշխատությունը՝ «Եկեղեցական պատմությունը», որը նույնպես կարևոր գիտական արժեք է ներկայացնում, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ նրա ասորական բնագրից ընդարձակ հատվածներ են պակասում, և այդ բացը լրացվում է հայերեն թարգմանության շնորհիվ:

Հայ թարգմանական գրականության նշանավոր հուշարձաններից է նաև Իրենեոս Լուգդոնացու (մահ. մոտ. 203թ.) «Ցույցք առաքելական քարոզության» աշխատությունը, որը հայտնաբերվել է մեր դարասկզբին և լույս տեսել 1907 թվականին, գիտական աշխարհի կողմից գնահատվելով որպես տարվա կարևորագույն գյուտը հայրաբանական գրականության բնագավառում: Նման բացառիկ գնահատությունը բացատրվում է նրանով, որ Իրենեոսի ինչպես այս, այնպես և մյուս հայտնի աշխատության՝ «Ընդդեմ հերձվածների» երկի հունարեն բնագրերը կորած են: Վերջինս, որ բաղկացած է հինգ գրքերից, պահպանվել է հնագույն լատիներեն թարգմանությամբ: «Ընդդեմ հերձվածների» աշխատության հայերեն թարգմանությունից մեզ են հասել միայն չորրորդ և հինգերորդ գրքերը, որոնք նույնպես կարևոր նշանակություն ունեն Իրենեոսի գրական ժառանգության ուսումնասիրման համար: Վերջերս ֆրանսիացի հայագետ Շառլ Ռնոն հայկական մի ձեռագրում հայտնաբերեց և հրատարակեց Իրենեոսի նշված գործերից կազմված մի ընդարձակ քաղվածաշար, որտեղ բազմաթիվ բնագրական մեջբերումներ կան նաև «Ընդդեմ հերձվածների» երկի առաջին երեք գրքերից: Դա ցույց է տալիս, որ ժամանակին այդ երկը նույնպես հայերեն է թարգմանվել ամբողջությամբ: Իրենեոսի աշխատությունների հայերեն բնագրերը իրենց ներկայացրած գիտական մեծ արժեքի շնորհիվ թարգմանվել և հրատարակվել են եվրոպական մի շարք լեզուներով՝ գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն և այլն:

Միայն հայերեն թարգմանությունների շնորհիվ է պահպանվել նաև առաջին դարի նշանավոր իմաստասեր և աստվածաբան Փիլոն Եբրայեցու կամ Աղեքսանդրացու գրական ժառանգության զգալի մասը: Բավական է նշել, որ Փիլոնի հայերենով հայտնի տասնհինգ երկերից ութի հունարեն սկզբնագրերը կորած են: Դրանք են՝ Ծնըն-

դոց և Ելից գրքերի մեկնությունները, նախախնամությանը նվիրված երկու ճառերը, ինչպես նաև «Կենդանիների մասին», «Սամփսոնի մասին», «Հովնանի մասին» և «Աստծո մասին» քարոզները: Թեև վերջին երեք աշխատությունների վավերականությունը բանասիրության կողմից կասկածի տակ է առնված, այդուհանդերձ, հետազոտողների կարծիքով դրանք մեծ հատաքրքրություն են ներկայացնում որպես հունա-եբրայական միջավայրի ուշագրավ գրական արտադրանքներ: Փիլոնի երկերի հայերեն բնագրերի շարքում իրենց կարևորությամբ առանձնանում են Մենդոց և Ելից գրքերի մեկնությունները, և այդ պատճառով էլ նրանք արժանացել են լատիներեն, անգլերեն և ֆրանսերեն թարգմանությունների:

Հայ թարգմանական գրականության մեջ Աստվածաշնչից հետո իր ծավալով և ձեռագրական ընդօրինակությունների թվով առաջին տեղն զբաղեցնում է բյուզանդացի մատենագիր Հովհան Ոսկեբերանի (մահ. 407թ.) գրական ժառանգությունը, որի մի կարևոր մասը նույնպես հայտնի է միայն հայերեն բնագրով: Հայրաբանական գրականության նորագույն մատենագիտություններից մեկում նշված է Հովհան Ոսկեբերանին պատկանող կամ նրան վերագրված այդպիսի քառասուններեք գործ, որոնց մեծ մասը դեռևս անտիպ է: Առայժմ հրատարակված են միայն նրանցից տասներեքը: Ոսկեբերանի հայերեն թարգմանությունների շարքում գիտական շրջանակների ուշադրությանն է արժանացել հատկապես Եսայու գրքի մեկնությունը, որի հունարեն նախօրինակից պահպանվել են միայն առաջին ութ գլուխները, իսկ մնացած 56 գլուխների միակ վկայությունը հանդիսանում է հայերեն բնագիրը: Ոսկեբերանի մեկնության հայերեն բնագիրն անցյալ դարի վերջերին թարգմանվել է լատիներենի և մտել գիտական շրջանառության մեջ:

Հայերեն թարգմանության շնորհիվ փրկվել է նաև բյուզանդական մեկնողական գրականության մի այլ նշանավոր հուշարձան՝

Իսիքիոս Երուսաղեմացու (մահ. 450թ. հետո) «Հոբի մեկնություն-
նը»: Ըստ պահպանված տեղեկությունների՝ Իսիքիոսը մեկնություն-
ներ է գրել աստվածաշնչական բոլոր գրքերի վերաբերյալ, որոնցից,
սակայն, քչերն են մեզ հասել: «Հոբի մեկնության» հայերեն բնա-
գիրը հրատարակվել է մի թերի ձեռագրի հիման վրա, սակայն
Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են Իսիքիոսի
երկի ավելի ամբողջական ընդօրինակություններ, որոնց համե-
մատությամբ ներկայումս պատրաստվում է հայերեն բնագրի մի
նոր, քննական հրատարակություն: Վերջերս հայտնաբերվեց նաև
Իսիքիոս Երուսաղեմացու «Սուրբ Հովհաննեսի մասին» ճառի հա-
յերեն թարգմանությունը, որի հունական սկզբնագիրը նույնպես
չի պահպանվել:

Առայժմ չի հայտնաբերված նաև Տիմոթեոս Կուզի (մահ. 477թ.)
«Հակաճառություն Քաղկեդոնի ժողովի սահմանումների դեմ» աշ-
խատության հունարեն նախօրինակը: V դարի ներքրիստոնեական
դավանաբանական պայքարի այս թանկարժեք հուշարձանը մեզ
է հասել հայերեն և ասորերեն թարգմանությունների շնորհիվ:
Սակայն բելգիացի բանասեր Ժ. Լըբոնը, համեմատելով հայերեն
և ասորերեն բնագրերը, հանգել է այն եզրակացության, որ վեր-
ջինս հանդիսանում է Տիմոթեոսի երկի փոփոխված և համառոտված
տարբերակը, մինչդեռ հայերեն թարգմանության մեջ այն պահպան-
վել է ամբողջությամբ և նախնական տեսքով: Տիմոթեոս Կուզի
«Հակաճառությունը» զգալի ազդեցություն է ունեցել հայ դավա-
նաբանական գրականության վրա: VII դարի սկզբում Կոմիտաս
կաթողիկոսը նրա նմանողությամբ կազմել է «Կնիք հաւատոյ»
ժողովածուն, իսկ XIII դարում Վարդան Այգեկցին՝ «Արմատ հաւա-
տոյ» ժողովածուն: Հակաքաղկեդոնական բնույթի այս երկասիրու-
յունները կարևոր դեր են խաղացել հայոց եկեղեցու անկախու-
թյան և հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության համար մղ-
ված պայքարում:

Հայկական թարգմանությունները որոշ նպաստ են բերում նաև հայրաբանական գրականության մյուս ականավոր ներկայացուցիչների՝ Աթանաս Աղեքսանդրացու (295 — 373թ.), Սեբերիանոս Գաբաղացու (մահ. 408թ. հետո), Եվսեբիոս Եմեսացու (մահ. մոտ 359թ.) և ուրիշների ստեղծագործական ժառանգության ամբողջացման գործում: Բավական է նշել, որ միայն հայերեն թարգմանությունների շնորհիվ են պահպանվել Աթանաս Աղեքսանդրացու տասնմեկ, Սեբերիանոս Գաբաղացու տաս և Եվսեբիոս Եմեսացու ինը գրվածքները: Կարևոր է հատկապես Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնության» նորերս լույս ընծայված հայերեն թարգմանությունը, որը մեզ է հասել համարյա ամբողջությամբ, մինչդեռ մեկնության հունարեն բնագրից միայն առանձին հատվածներ են պահպանվել միջնադարյան քաղվածաշարերում: Կարելի է նշել նաև Արիստիդես Աթենացու, Բարսեղ Կեսարացու, Եվագրոս Պոնտացու, Եվթաղ Սարկավագի, Կյուրեղ Աղեքսանդրացու, Հիպոլիտոս Բոստրացու, Անթիպատրոս Բոստրացու և եկեղեցական այլ հեղինակների առանձին երկերի հայերեն թարգմանություններ, որոնց հունարեն սկզբնագրերը նույնպես կորած են:

Հայրաբանական գրականության ուսումնասիրման բնագավառում ամենամեծ ավանդը, սակայն, մուծում են Եփրեմ Ասորու (մահ. 373թ.) երկերի հնագույն հայերեն թարգմանությունները, որոնցից շատերի ասորական սկզբնագրերը մեզ չեն հասել: Դրանք են «51 կցուրդների ժողովածուն», «Նիկոմիդիայի 16 ողբերը», «Պողոսի թղթերի մեկնությունը», «Տատիանոսի Համաբարբառի (Դիատեսարոն) մեկնության» զգալի մասը, Ծննդոց, Ելից, Թվոց, Ղեկտացվոց, Երկրորդ Օրինաց, Հեսուհի, Դատավորաց, Թագավորությանց և Մնացորդաց գրքերի համառոտ մեկնությունները, Հոբի և Գործք Առաքելոց գրքերի մեկնությունների հատակոտորները, ինչպես նաև մի շարք ճառեր, աղոթքներ և խրատներ: Սկսած

1836 թվականից, Եփրեմի երկերի հայերեն թարգմանությունների քառահատոր ժողովածուի հրատարակությունից հետո, նշված գրական հուշարձաններն իրենց վրա են գրավել եվրոպական բանասիրության ուշադրությունը: Անցած մեկուկես հարյուրամյակում նրանց շուրջը հսկայական հետազոտական նյութ է կուտակվել, որոշ բնագրեր արժանացել են նոր, քննական հրատարակությունների և թարգմանվել լատիներեն կամ ժամանակակից եվրոպական լեզուներով: Այսպես, «Տատիանոսի Համաբարբառի մեկնությունն» ունեցել է երկու հրատարակություն (1836 և 1953թթ.), երկու անգամ թարգմանվել է լատիներենի (1876 և 1954թթ.) և մեկ անգամ ֆրանսերենի (1966թ.): 1836 թվականի հրատարակության հիման վրա լատիներեն է թարգմանվել նաև «Պողոսի թղթերի մեկնությունը» (1893թ.): Գործք Առաքելոցի մեկնությունից կատարվել են լատիներեն և անգլերեն թարգմանություններ (1926թ.): «Կցուրդների ժողովածուն» հրատարակվել է երեք անգամ (1934, 1957, 1966 թթ.), վերջինը հանդիպադիր լատիներեն թարգմանությամբ: «Նիկոմիդիայի ողբերն» ունեցել են երկու հրատարակություն (1930, 1975թթ.), որոնցից երկրորդը՝ ֆրանսերեն թարգմանության ուղեկցությամբ:

Եփրեմի երկերի հայերեն թարգմանությունների նկատմամբ եղած այսպիսի հետաքրքրությունը բացատրվում է երկու կարևոր հանգամանքով. առաջին՝ Եփրեմը հանդիսանում է արևելյան հայրաբանության մեծագույն հեղինակությունը, որի ուսմունքը ներկայացնում է հունական ազդեցությունից զերծ մնացած բնիկ արամեախոս քրիստոնեության գաղափարախոսությունը. երկրորդ՝ նրա երկերը մեծ նշանակություն ունեն աստվածաշնչական բնագրերի, մասնավորապես Նոր Կտակարանի քննության համար, որովհետև ստեղծված են ավելի վաղ, քան վերջինիս հունարեն և ասորերեն մեզ հասած հնագույն ընդօրինակությունները:

Եփրեմ Ասորու ստեղծագործություններից բացի հայերեն թարգմանությունների շնորհիվ փրկվել և մեզ են հասել նաև ասորական գրականության մի շարք այլ հուշարձաններ, ինչպես՝ Այիթալա եղեսացու «Հովվական թուղթը», Զենոբ Ամդեցու ճառերը, «Վկայք Արևելից» ժողովածուի ներածության մեծ մասը, Մարութա Նփրկերտցու վարքը, Յազդանդուխտի և Բարդիշոյի վկայաբանությունները, Միքայել Ասորու «Ժամանակագրության» առաջաբանը և Նանա Սարկավագի «Հովհաննու մեկնությունը», որը հայերեն է թարգմանվել հավանաբար արաբական բնագրի միջնորդությամբ:

Հայկական թարգմանությունների գիտական նշանակությունը, սակայն, չի սահմանափակվում միայն եկեղեցական գրականության շրջանակներով. հայերենով հայտնի փիլիսոփայական և իրավագիտական երկերի շարքում նույնպես կան այնպիսիները, որոնց սկզբնագրերը մեզ չեն հասել: 1949 թվականին հայերեն թարգմանությամբ լույս տեսավ Զենոն Իմաստասերի «Բնության մասին» նորահայտ աշխատությունը, որի հեղինակի հարցն առայժմը բանասիրության մեջ բավարար լուծում չի գտել: Եթե ապացուցվի ուսումնասիրողների այն հավանական ենթադրությունը, որ այդ երկը պատկանում է ստոյիկյան փիլիսոփայական դպրոցի հիմնադիր Զենոն Կիտիոնացու (մոտ. մ. թ. ա. 336 — 264թթ.) գրչին, ապա հայերեն բնագիրը մեծ նշանակություն կարող է ստանալ վերջինիս աշխարհայացքի և ընդհանրապես ստոյիկյան դպրոցի ուսմունքի լուսաբանման տեսակետից, քանի որ Զենոնի երկասիրություններին արդի գիտությունն առայժմ ծանոթ է միայն հետագա հույն հեղինակների մոտ պահպանված քաղվածքների միջոցով:

1956 թվականին լույս տեսավ Հերմես Եռամեծին վերագրված «Առ Ասկղեպիոս Սահմանք» աշխատության հայերեն թարգմանությունը, որի հունարեն նախօրինակը ևս կորած է համարվում:

Կրոնա-փիլիսոփայական բնույթի այս գրվածքը, լինելով մեր թվականության III դարում եգիպտոսում տարածում գտած հերմեսյան գրականության մնացորդներից մեկը, զգալիորեն լրացնում է այդ գրականության մասին եղած գիտական պատկերացումները, որի շնորհիվ արդեն արժանացել է եվրոպական բանասիրության ուշադրությանը: «Առ Ասկղեպիոս Սահմանք» աշխատությունը գիտական նպատակներով հայերենից թարգմանվել ու հրատարակվել է ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով:

Արդի գիտության համար կարևոր նշանակություն ունի նաև «Անտիոքի ասիզների» հայերեն թարգմանությունը, որն իրագործվել է XIII դարի երկրորդ կեսում Սմբատ Սպարապետի կողմից: Մինչև նրա հայտնաբերումը հայտնի էր միայն Երուսաղեմի օրենսգրքի գոյությունը, թեև ենթադրվում էր, որ Արևելքում հիմնադրված մյուս խաչակրաց պետությունները նույնպես պետք է ունեցած լինեին իրենց օրենսգրքերը: Անտիոքի օրենքների հայերեն բնագիրը, որը հանդիպադիր ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակվեց 1876 թվականին, լիովին արդարացրեց այս ենթադրությունը, լրացուցիչ նյութ մատակարարելով խաչակրաց պետությունների հասարակական կարգի ուսումնասիրման համար: Անտիոքի օրենսգիրքը որոշ հետաքրքրություն է ներկայացնում նաև Կիլիկյան հայկական թագավորության պատմության զանազան խնդիրների լուսաբանման տեսակետից, քանի որ Սմբատ Սպարապետի վկայությամբ, այն գործնական կիրառություն է ունեցել նրա սահմաններում:

Բացառված չէ, որ աշխարհասփյուռ հայկական ձեռագրերում, որոնք սպասում են իրենց լիակատար նկարագրությանը, պահպանվում են նաև այլ՝ գիտական աշխարհին դեռևս անծանոթ թարգմանական երկեր: Բոլորովին վերջերս, օրինակ, հայտնաբերվեցին և հրատարակվեցին երկու նոր թարգմանական հուշարձան-

ներ, որոնց սկզբնագրերն առայժմ անհայտ են: Դրանք են՝ Եվտիքիոս Կոստանդնուպոլսեցու (մահ. 582թ.) դավանաբանական մի աշխատությունը և Ֆարաջ Ասորու «Բժշկարան ձիոյ» անասնաբուժական ձեռնարկը:

Հարկ է ավելացնել, սակայն, որ բանասիրական հետազոտությունների համար մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն այն հայերեն թարգմանությունները, որոնց սկզբնագրերը մեզ չեն հասել, այլև նրանք, որոնք հայտնի են և՛ իրենց սկզբնագրերով, և՛ նույնիսկ մի քանի այլ թարգմանություններով: Նման դեպքերում հայերեն թարգմանությունները նպաստում են իրենց նախօրինակաների բնագրական աղավաղումների վերացմանը: Այսպես, օրինակ, դեռևս անցյալ դարի սկզբում Սեն - Մարտենը, համեմատելով Արիստոտելի և Պլատոնի երկերի հունարեն և հայերեն բնագրերը, հանգել էր այն եզրակացության, որ վերջիններս թարգմանված լինելով ամենայն բժախնդրությամբ, «կարող են ծառայել այդ փիլիսոփաների բնագրերի բազմաթիվ դրվագների իմաստը ճշտելու գործին»: Հետագայում անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը Արիստոտելի և Պորփյուրի երկերի բնագրական քննության հիման վրա գործնականորեն ապացուցեց այս եզրակացության արդարացիությունը, ելակետ ունենալով հայերեն թարգմանությունների երեք կարևոր հատկանիշները՝ հնությունը, ճշգրտությունը և մեզ հասած բնագրերի անաղարտությունը: Կարելի է ավելացնել, որ ոչ միայն նշված երկերի, այլև մյուս հայերեն թարգմանությունների մեծ մասը լիովին համապատասխանում է այս երեք անհրաժեշտ պայմաններին, ուստի նույնպես պիտանի է օգտագործվելու հունական և ասորական սկզբնագրերի ճշգրտման գործում:



Մի էջ Ալեքսանդրի պատմությունից
Մատենադարան, ձեռ. 5472 (XVI դ.)

Նախորդ շարադրանքից կարող է ստեղծվել այն միակողմանի տպավորությունը, որ միջնադարյան թարգմանությունները կոչված են եղել բավարարություն տալու սոսկ հայ ընթերցողի կրոնական, գիտական և ուսումնական պահանջներին: Մինչդեռ քրիստոնեական մտայնության համատարած տիրապետության պայմաններում անգամ Հայաստանում երբևէ չի դադարել հետաքրքրությունը նաև զուտ գեղարվեստական բնույթի գրական երկերի նկատմամբ: Դեռևս հայ մատենագրության արշալույսին հայերեն են թարգմանվել ոչ միայն քրիստոնեական գրականության գեղարվեստական ժանրերի (սրբախոսություն, հոգևոր բանաստեղծություն և այլն) բազմաթիվ հուշարձաններ, այլև ամբողջությամբ աշխարհիկ ոգով տոգորված ստեղծագործություններ, որոնց թիվը սկսել է աճել մանավանդ X — XIII դարերից հետո, պայմանավորված հայ մշակույթի աշխարհականացման ընդհանուր օրինաչափություններով:

Գեղարվեստական երկերի թարգմանություններն իրենց բովանդակությամբ, բնագրային պատմությամբ և ձեռագրական ավանդույթով որոշակիորեն տարբերվում են կրոնական ու գիտաուսումնական բնույթի թարգմանություններից: Եթե վերջիններս որպես կանոն մեզ են հասել սահմանափակ թվով ընդօրինակություններով, ապա գեղարվեստական երկերը պահպանվել են տասնյակ և նույնիսկ հարյուրավոր ձեռագրերով, որ նրանց տարածման և ժողովրդականության պերճախոս վկայությունն է: Միջնադարում կրոնական և գիտաուսումնական թարգմանությունների բնագրերը համարվել են կանոնական, այդ պատճառով նրանք սովորաբար ընդօրինակվել են անփոփոխ և ամենայն բարեխղճությամբ, մինչդեռ գեղարվեստական ստեղծագործությունները ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների ու շերտավորումների: Դրա հե-

տևանքով առաջացել են միևնույն բնագրի մի շարք ինքնուրույն տարբերակներ ու խմբագրություններ, որ նրանց տեղայնացման և ազգայնացման միտվածքի դրսևորումն է հանդիսանում:

Աշխարհիկ գեղարվեստական երկերի հայերեն թարգմանությունների շարքում իր հնությամբ և պատմա - մշակութային նըշանակությամբ առաջին տեղն զբաղեցնում է «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», որը վերագրվում է Կալիսթենես Ոլլոնթացու գրչին: Ուսումնասիրողների կարծիքով թարգմանությունը կատարվել է V դարի երկրորդ կեսին, հայ պատմագրության մեծագույն հեղինակության՝ քերթողահայր Մովսես Խորենացու ձեռքով: Պատմությունը նվիրված է Ալեքսանդր Մակեդոնացու առասպելական կյանքի, պարսիկների դեմ մղած երկարատև պատերազմների, շինարարական և մշակութային ձեռնարկումների գեղարվեստական նկարագրությանը, որի նպատակն է ստեղծել ամենակարող և արդարադատ հերոսի իդեալական կերպարը: Դրանով այն արձագանքել է V դարի հայ իրականության կենսական պահանջներին, կապված հայկական պետականության վերականգնման գաղափարի և անցյալի հերոսական օրինակներով ժամանակակիցներին ոգեշնչելու անհրաժեշտության հետ: Շնորհիվ այս հանգամանքի՝ Ալեքսանդրի պատմության հայերեն թարգմանությունն զգալի ազդեցություն է գործել ոչ միայն իր ժամանակի, այլ նաև հետագա ողջ հայ պատմագրության վրա: Մինչև XIII դարը, սակայն, նրա ազդեցությունն ու տարածումը սահմանափակվել է հիմնականում մատենագրական շրջանակներում:

Ալեքսանդրի պատմության հայերեն թարգմանության նոր կյանքն սկսվում է XIII — XIV դարերից, երբ այն, ենթարկվելով էական փոփոխությունների, թափանցում է ժողովրդական լայն զանգվածների միջավայրը, դառնալով նրանց ընթերցանության կամ ունկնդրության ամենասիրելի գրքերից մեկը: Այդ գործի ձեռ-

Նարկոզն ու իրականացնողը XIII — XIV դարերի հայ բանաստեղծ Խաչատուր Կեչառեցին է, որն իր առջև նպատակ էր դրել արդիականացնել այդ հնամյա վեպը, մեղմացնել նրա հեթանոսական ոգին և հաշտեցնել քրիստոնեական բարոյականության գաղափարների հետ: Այդ նպատակով նա կատարում է բազմաթիվ բնագրական միջանկյալ հավելումներ և պատմությունը ժողովրդական լայն շրջանակներին մատչելի դարձնելու համար, այն ընդմիջում է հարյուրից ավելի չափածո քնարական հատվածներով կաֆաներով, գրված հայ միջնադարյան բանաստեղծության ամենատարածված տարատեսակներից մեկի՝ հայրենի չափով: Կեչառեցու գործը XVI դարում շարունակում են Գրիգոր Աղթամարցին և Զաքարիա Գնունեցին: Հիմնականում այս երեք հեղինակների ջանքերի շնորհիվ փաստորեն առաջանում է Ալեքսանդրի պատմության հայկական ինքնուրույն տարբերակը, որն աչքի է ընկնում տեղական, ազգային որոշակի յուրահատկություններով: Ալեքսանդրի պատմության հայերեն թարգմանության տարածման մասին պատկերացում կարելի է կազմել թեկուզ միայն այն փաստով, որ մեզ հասած ձեռագիր ընդօրինակությունների թիվն անցնում է յոթանասունից: Նրանց մի մասը նկարագարված է ռազմի տեսարաններ ներկայացնող գունագեղ պատկերներով, որոնք հայ աշխարհիկ մանրանկարչության բարձրարվեստ նմուշներից են:

Տվյալներ կան այն մասին, որ միջնադարում Ալեքսանդրի պատմությունը տարածվել է նաև բանավոր ձևնապարհով, պահպանվել են նույնիսկ ձեռագրեր, գրի առնված բանավոր պատումների հիման վրա: Բացի բուն պատմությունից հայ իրականության մեջ շրջանառության մեջ են եղել նաև Ալեքսանդրի շուրջը հյուսված թարգմանական և ազգային բազմաթիվ ավանդություններ ու գրույցներ:

Գրական մշակման և ժողովրդականացման նույնպիսի երկարատև ուղի են անցել նաև Պղնձե քաղաքի, Աղջկա և մանկան,

Փահլուլ թագավորի պատմությունները, որոնք իրենց ակունքներով կապվում են արաբական հռչակավոր «Հազար ու մեկ գիշերներ» հեքիաթաշարի հետ: Մի մեծարժեք ձեռագրական տեղեկության համաձայն՝ այդ պատմություններից առաջին երկուսը արաբերենից հայերեն են թարգմանվել X դարի վերջում, Տայոց իշխան Դավիթ Կուրապաղատի պատվերով: Հետագա դարերում նրանց բնագրերը ենթարկվել են էական խմբագրական փոփոխությունների, հարցստանալով Նորանոր շերտերով և հատկապես չափածո ընդմիջարկություններով կաֆաներով, որոնց ստեղծման գործում ի թիվս այլոց, իր մասնակցությունն է բերել նաև XIII դարի հայ նշանավոր տաղերգու Ֆրիկը: Պղնձե քաղաքի, Փահլուլ թագավորի, Աղջկա և մանկան պատմությունների այլևայլ տարբերակներն ու խմբագրություններն ուշ միջնադարում տարածվել են բազմաթիվ ընդօրինակություններով և հնատիպ հրատարակություններով: Դա ցույց է տալիս, որ այդ հրաշապատում հեքիաթներն իրենց արկածային բովանդակությամբ, սրամիտ հանգուցալուծումներով և երևակայական աշխարհների զմայլանքով ինչ - որ չափով հագուրդ են տվել հայ ընթերցողի գեղագիտական պահանջներին:

Հայ թարգմանական գրականության բնագավառում բավական ընդարձակ կերպով են ներկայացված խրատական, բարոյաուսուցողական երկերը: Հայկական թարգմանական արձակի և ընդհանրապես հին աշխարհի գեղարվեստական գրականության լավագույն նմուշներից է Խիկար Խմաստունի պատմությունը, որն ստեղծվել է մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերին արամեական ժողովուրդների միջավայրում, և որի ազդեցությունը նկատվում է նույնիսկ Եզովպոսի առակների ու Աստվածաշնչի բարոյախրատական գրքերի վրա: Խիկարի պատմությունը հայերեն է թարգմանվել V դարում ասորական բնագրից, դառնալով հայ ժողովրդի ընթերցանության ամենասիրված և տարածված գրքերից մեկը:

Հայկական միջավայրում պատմությունը կրել է նկատելի փոփոխություններ, ծնունդ տալով մի ամբողջ շարք տարբերակների, որոնք ցրված են հարյուրավոր ձեռագրերում: Այսպիսի ժողովրդականությունը բացատրվում է նրանով, որ պատմությունն աչքի է ընկնում չափազանց հետաքրքրաշարժ բովանդակությամբ:

Ասորեստանի Սենեքերիմ արքայի խորհրդական Խիկարը, լինելով անժառանգ, որդեգրում է իր Նաթան անունով քեռորդուն և անհրաժեշտ դաստիարակություն տալուց հետո նստեցնում իր պաշտոնին: Վերջինս, սակայն, մոռանում է իր մորեղբոր երախտիքը և թագավորի առջև ծանր մեղադրանքով ամբաստանում է նրան: Խիկարը դատապարտվում է մահվան, բայց մի հավատարիմ ծառայի օգնությամբ խուսափում է պատժից և թաքնվում: Որոշ ժամանակ անց եգիպտոսի թագավորը Նաթանի առջև դրժվարին խնդիրներ է դնում, որոնք չլուծելու դեպքում Ասորեստանը հարկատու պիտի դառնար եգիպտոսին: Նաթանը ապիկար է գտնվում այդ հարցում, և Սենեքերիմն ափսոսանքով հիշում է իր իմաստուն խորհրդականին ու ողբում նրա կորուստը: Այնժամ վերջինիս ծառան բացահայտում է Խիկարի գաղտնիքը: Թագավորը ցնծությամբ դիմավորում է իր խորհրդականին և ուղարկում եգիպտոս: Խիկարն այստեղ հնարամտորեն լուծում է փարավոնի առաջադրած բոլոր խնդիրները և, հաղթությամբ ետ դառնալով, վերստանում է իր նախկին պատիվներն ու հարստությունը: Նաթանը հանձնվում է Խիկարի ողորմածությանը և դառն կշտամբանքների արժանանում նրա կողմից:

Պատմությունն ընդմիջվում է երկու ընդարձակ խրատաշարքերով, որոնցից առաջինը վերաբերում է Նաթանի սնուցման և դաստիարակության շրջանին: Այստեղ Խիկարն իր քեռորդուն ավանդում է կյանքի իմաստությունը, զգուշացնելով զանազան գայթակղություններից ու չարագործություններից, ինչպես «Որ-

դյակ, լավ է քար կրել իմաստուն մարդու հետ, քան գինի խմել չարախոսի ու անմիտի ընկերակցությամբ», կամ «Որդյակ, չար բան մի ասա ոչ ոքի մասին, որ ուրիշները քո մասին բարի խոսեն» և այլն: Երկրորդ խրատաշարքը հաջորդում է Նաթանի պատժի դրվագին և ուղղված է երախտամոռության դատապարտմանը, ինչպես՝ «Դու ինձ համար, որդյակ, եղար ինչպես շուն, որը մտավ բրուտի հնոցատունը և երբ տաքացավ, սկսեց հաչել նրա վրա», կամ «Որդյակ, ես քեզ բարձրացրի Աստծու և մարդկանց առջև, իսկ դու չար հատուցեցիր քո բարերարին» և այլն:

Նույն ժանրի գրական երկերից է նաև պարսից Խոսրով Անուշիրվան թագավորի անունով հայտնի խրատաշարքը, որը հայերեն է թարգմանվել XIII դարում: Գրական կապերի տեսակետից ինքնին հետաքրքիր է այն ուղին, որ անցել է «Նուշիրվանի խրատների» բնագիրը Նախքան հայերեն թարգմանվելը և դրանից հետո: Այն ստեղծվել է VI դարում միջին պարսկերենով, IX դարում թարգմանվել է արաբերենի, X դարում արաբերենից վերաթարգմանվել է նոր պարսկերենի, XIII դարում պարսկերենից հայերենի, իսկ XVIII դարում հայերենից հայատառ թուրքերենի: «Խիկարի խրատների» նման «Նուշիրվանի խրատները» ևս լայն տարածում են գտել միջնադարյան Հայաստանում և զանազան խմբագրություններով ու տարբերակներով ընդօրինակվել տասնյակ ձեռագրերում: Ներանցում իրենց յուրահատուկ արտացոլումն են գտել ֆեոդալական հասարակության սոցիալական ու կենցաղային հարաբերությունները, բարոյական չափանիշներն ու պատկերացումները, որոնք միանգամայն հասկանալի և ընդունելի էին հայ ընթերցողի համար: Եվ պատահական չէ, որ նրանք որոշ արձագանք են գտել հայ միջնադարյան խրատական բանաստեղծության մեջ՝ Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես Երզնկացու և Նաղաշ Հովնաթանի տաղերում:

Իր բնույթով խրատական՝ երկերին մոտ է կանգնած նաև հայ թարգմանական գրականության մի այլ հնագույն հուշարձան՝ «Բանք իմաստասիրաց» խորագիրը կրող ամփոփ ժողովածուն, որտեղ ի մի են բերված անտիկ աշխարհի մեծ մտածողների խրատները, թևավոր խոսքերը, իմաստալից ասույթներն ու երբեմն նույնիսկ առանձին զրույցներ և հետաքրքրաշարժ պատմություններ: Հանվանե հիշատակված են Պյութագորը, Դեմոկրիտը, Սոկրատը, Պլատոնը, Արիստոտելը, Դեմոսթենեսը, Դիոգենեսը և շատ ուրիշ փիլիսոփաներ ու ճարտասաններ: Ժողովածուի նյութերը խմբավորված են ըստ հետևյալ թեմաների՝ իմաստություն, ուսում, բարեկամություն, իշխանություն, արիություն, ընչասիրություն, փառք, լռություն, հարբեցողություն և այլն: Ահա մի նմուշ իմաստության թեման լուսաբանող զրույցներից. «Եմպեդոկրատեսն ասաց՝ Մի իմաստուն մարդ չգտա: Նրան ասացին՝ Ով իմաստուն է փնտրում, պետք է նախ ինքը իմաստուն լինի»: Հետևյալ խրատը նվիրված է հարստության թեմային. «Սոկրատն ասաց՝ Արհամարհիր նրան, ով հարստություն ստանալով, չի կարողանում վայելել, քանզի նա նման է նրանց, ովքեր ձի ձեռք բերելով, չեն կարողանում հող վարել»: Չափազանց դիպուկ և գեղեցիկ է նաև կյանքի ու մահվան խնդիրն արծարծող այս իմաստությունը. «Արիստոտելն ասաց՝ Երկրային կյանքից պետք է հեռանալ ինչպես սեղանից՝ ոչ քաղցած և ոչ կուշտ, ոչ ծարավ և ոչ հագեցած»: Այս մի քանի նմուշներից էլ կարելի է պատկերացնել, թե «Բանք իմաստասիրաց» ժողովածուն ինչպիսի մեծ գեղագիտական հաճույք կարող է պատճառած լինել միջնադարի հայ ընթերցողին:

Միջնադարյան Հայաստանում նույնքան տարածված են եղել նաև առակագրական ժանրի երկերի թարգմանությունները, որոնցից հնագույնը համարվում է «Բարոյախոս» ժողովածուն: Ենթադրվում է, որ առակների և զրույցների այդ ժողովածուն ստեղծ-

վել է մեր թվականության առաջին դարերին եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Հայտնի են նրա բազմաթիվ հնագույն թաղամանություններ՝ լատիներեն, ասորերեն, ղպտերեն, հայերեն, եթովպերեն, արաբերեն և այլ լեզուներով: Ուշ միջնադարում ժողովածուն լայն տարածում է գտել նաև Եվրոպայում թարգմանվելով և բազմիցս հրատարակվելով տարբեր երկրներում: «Բարոյախոսը» հիմնականում նվիրված է իրական և երևակայական կենդանիների բարքերի ու հատկությունների նկարագրությանը, որոնց կցված են բարոյաուսուցողական բնույթի այլաբանական մեկնաբանություններ, ինչպես՝ «Այս զրույցը ցույց է տալիս, որ պետք է զգուշանալ թշնամու խորհրդից» կամ «Նույնպես և սատանան շողոքորթ կերպարանքով կործանում է շատերին» և այլն: Հանրահայտ է, որ «Բարոյախոսը» մեծ ազդեցություն է գործել հայ միջնադարյան գրականության և նույնիսկ հայկական ճարտարապետության վրա, օրինակ ծառայելով եկեղեցիների զարդաքանդակների կենդանական պատկերների համար:

Տարբեր ուղիներով հնագույն ժամանակներից Հայաստան են թափանցել նաև եզովպոսի առակները, սակայն նրա անունով որևէ ժողովածու հայ մատենագրության մեջ հայտնի չէ: Հունաբան դպրոցի հայկական թարգմանությունների շարքում կա առակների մի ժողովածու, որը կրում է Ուլիմպիանի անունը, թեև, ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, այն համարյա ամբողջությամբ կազմված է եզովպոսյան առակներից: Եվ քանի որ հունական գրականության մեջ առայժմ այդպիսի ժողովածու չի հայտնաբերվել, ենթադրվում է, որ այդ առակները քաղվել և առանձնացվել են Ուլիմպիան հռետորի մի ճարտասանական ձեռնարկից, որտեղ դրանք բերված են եղել որպես ճարտասանական այս կամ այն կանոնը լուսաբանող օրինակներ: «Բարոյախոսի» նման, Ուլիմպիանի ժողովածուն նույնպես խոր հետք է թողել հայ առակագրու-

թյան վրա: Վարդան Այգեկցու անունով հայտնի «Աղվեսագրք-քերում» ընդգրկված են բազմաթիվ առակներ այդ ժողովածուներից:

«Աղվեսագրքերում» որոշ տեղ են գտել նաև արևելքի ամենահռչակավոր գրական հուշարձաններից մեկի՝ «Քալիլա և Դիմնայի» առակները, սակայն նրա մի ամբողջական միջնադարյան թարգմանությունն հայերենով հայտնի չէ: Նրա բավական ընդարձակ մի խմբագրությունը հայ իրականությունն է թափանցել համեմատաբար ուշ ժամանակներում «Փոնցիանոս կայսեր կամ յոթ իմաստասերների պատմություն» վերնագրով: Դա «Քալիլա և Դիմնայի» արևմտյան տարբերակներից մեկն է, որ լատիներենից հայերեն է թարգմանվել 1614 թվականին Հակոբ Թոքատեցու կողմից: Սակայն չնայած այդքան ուշ թարգմանությանը, հուշարձանը կարճ ժամանակի ընթացքում լայն արձագանք է գտել հայ հասարակության մեջ. XVII — XVIII դարերում ստեղծվել և մեզ են հասել պատմության բազմաթիվ ձեռագիր ընդօրինակություններ, 1693 — 1857 թվականների ժամանակամիջոցում իրագործվել են տասից ավելի հրատարակություններ, կատարվել են նաև նրա հայատառ և արաբատառ թուրքերեն թարգմանություններ: Այսպիսի ընդունելությունը զարմանք չպետք է պատճառի, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ, ինչպես նշում է հայ բազմավաստակ բանասեր Ն. Ակիսյանը, «Համաշխարհային գրականության մեջ չկա մի մատյան, որ Աստվածաշնչից հետո այնքան ծավալում և ժողովրդականություն գտած լիներ, ինչպես Յոթ իմաստասերների պատմությունը»:

Հայ թարգմանական գրականության աշխարհիկ բնույթի գործերի շարքում կան նաև չափածո ստեղծագործություններ, որոնցից ամենանշանավորն է «Փարեզի ու Վեննայի պատմությունը»՝ միջնադարյան եվրոպայի ամենատարածված ասպետական սիրա-

վեպերից մեկը, ստեղծված XIV դարում Կատալոնիայում: 1487 թը-
վականին լույս է տեսել նրա ֆրանսերեն թարգմանությունը, հիմք
հանդիսանալով Նորանոր թարգմանությունների ու փոխադրու-
թյունների համար: XV դարի վերջում և ողջ XVI դարում իրականաց-
վել են սիրավեպի բազմաթիվ հրատարակություններ եվրոպական
տարբեր լեզուներով: Հայերեն թարգմանությունն իրագործվել է
1587 թվականին Մարսելում, հայ տպագրության երախտավորնե-
րից մեկի՝ Հովհաննես Տերզնցու ձեռքով: Ենթադրվում է, որ հա-
յերեն թարգմանության համար հիմք է ծառայել պատմության
խալերեն չափածո մշակումներից մեկը:

Սիրավեպի լայն տարածումն ու ժողովրդականությունը բա-
ցատրվում է նրա խոր հուզականությամբ և գեղարվեստական բար-
ձր արժանիքներով: Պոեմում սիրո պատմությունը զարգանում է
սոցիալական անհավասարության՝ տիրոջ և ծառայի հարաբերու-
թյունների պայմաններում: Ի վերջո, հաստատվում է բարոյական
այն իմաստությունը, որ անկեղծ, նվիրված սիրո հանդեպ անզոր
են բոլոր չարիքներն ու խոչընդոտները: Մեծապատիվ սենյորի
դստեր՝ Վեննայի և հասարակ ասպետ Փարեզի սերը, դիմագրավե-
լով ամեն տեսակ փորձությունների ու արգելքների, վերջիվերջո
հաղթանակով է դուրս գալիս դրանցից: Հայ իրականության մեջ
սիրավեպի տարածմանը նպաստել է, ըստ երևույթին, նաև այն
հանգամանքը, որ ըստ նրա հայկական տարբերակի՝ արևելյան
երկրներում, Ասորիքում, Եգիպտոսում, Միջագետքում և Պարս-
կաստանում թափառելու ընթացքում պանդուխտ ասպետն այցելել
է նաև Հայաստան, եղել Անի քաղաքում:

Դատելով պահպանված ընդօրինակությունների հսկայական
քանակից, միջնադարյան հայ ընթերցողի սիրված գրքերից են եղել
նաև «Վարք հարանց» և «Հայելի վարուց» թարգմանական ժողո-
վածուները, որոնք թեև հետապնդում էին բարոյա - ուսուցողա-

կան նպատակներ, սակայն իրենց պարունակած հետաքրքրաշարժ գրույցների ու նովելատիպ պատմությունների շնորհիվ բավարարում էին նաև ընթերցողների գեղագիտական պահանջները:

«Վարք հարանց» ժողովածուն ձևավորվել է IV — V դարերում եգիպտացի ճգնավորների միջավայրում և այնուհետև թարգմանաբար տարածվել ողջ քրիստոնեական աշխարհում: Հայտնի են ժողովածուի հունարեն, լատիներեն, եթովպերեն, ասորերեն, արաբերեն, հայերեն բնագրերը: Վերջինս մեզ է հասել երկու խմբագրությամբ կամ, այսպես կոչված, հին և երկրորդ թարգմանություններով: Առաջին խմբագրությունը XII դարի վերջում Նախաձեռնել է կիլիկյան հայ մատենագրության նշանավոր դեմքերից մեկը՝ Ներսես Լամբրոնացին, ի մի բերելով ժողովածուի զանազան մասերի հնագույն թարգմանությունները: Երկրորդ խմբագրությունն իրագործվել է նույնպես Կիլիկիայում, շուրջ երկու դար հետո: Վերջինս աչքի է ընկնում բազմաթիվ նոր նյութերի ընդգրկմամբ և համեմատաբար ավելի կանոնավոր կառուցվածքով: Ժողովածուի գրույցներն ըստ բովանդակության խմբավորված են անապատական բարոյախոսության հիմնական սկզբունքների՝ խոնարհության, անընչասիրության, ժուժկալության, օտարասիրության, համբերության և այլ առաքինությունների համեմատ: Ահա մի նմուշ անվայել արարքների դատապարտությանը նվիրված գրույցներից. «Մի մարդ բնակվում էր ոմն ծերունու մոտ և ճաշի ժամանակ միշտ ոտքը դնում էր սեղանին, իսկ ծերը նրան չէր հանդիմանում: Երկար ժամանակ անց, այդ ծերունին գնաց մի ուրիշ պատվարժան մարդու մոտ և նրան պատմեց եղելությունը: Ավագը նրան ասաց. «Այդ եղբորն ուղարկիր ինձ մոտ»: Այդպես էլ արեց: Եվ երբ այդ եղբայրը գնաց նրա մոտ, ու ճաշի ժամին սեղան պատրաստվեց, ավագ ծերը փութով երկու ոտքը դրեց սեղանին: Այցելուն դժգոհեց և, չկարողանալով համբերել, ասաց. «Հա՛յր, այդպես չի կարելի

անել»: Ավագը ոտքերն իջեցրեց սեղանից ու ասաց. «Ճիշտ ես ասում, եղբայր, սա մեծ մեղք է, մեղանչեցի Աստծու առջև»: Եղբայրը վերադարձավ ծերունու մոտ և այլևս երբեք չկատարեց այդ անպարկեշտությունը»:

Ավելի հետաքրքրաշարժ ու զվարճալի են «Հայելի վարուց» ժողովածուի գրույցները, որոնք մեծ մասամբ հյուսված են աշխարհիկ կյանքի դրվագների շուրջ, թեև նույնպես բարոյախրատական նպատակներով: Ժողովածուի լատինական նախօրինակը կազմվել է 1480 թվականին: 1605 թվականին բելգիացի մատենագիր Հովհաննես Մայորը զգալիորեն ընդարձակել ու վերախմբագրել է ժողովածուն, նրան տալով «Մեծ հայելի» վերնագիրը: 1612 թվականին լույս է տեսել «Մեծ հայելու» լեհերեն թարգմանությունը, իսկ XVII դարի վերջում ռուսերենը: Հայերեն թարգմանությունը, ինչպես վերը նշվեց, կատարվել է XVII դարի կեսերին լեհական բնագրի հիման վրա Ստեփանոս Լեհացու կողմից: Ժողովածուի հայերեն բնագիրը բավական համառոտ է մյուս թարգմանությունների համեմատ, և պարունակում է ընդամենը 247 գրույց: Զրույցներն ինչպես «Վարք հարանց» ժողովածուում ըստ բովանդակության բաժանված են տարբեր գլուխների: Զրույցներում ծաղրի ու քննադատության են ենթարկվում հասարակության տարբեր խավերի՝ հոգևորականների, հարուստների, վաշխառուների կենցաղավարության արատավոր կողմերը: Օրինակ, ազահության թեմայի տակ ամփոփված գրույցներից մեկում պատմվում է հետևյալը. «Մի մարդ որ հին թագավորների բազում դրամներ ուներ, հիվանդացավ և գնաց հիվանդանոց, որտեղ ընդունեցին նրան: Նա ազահությունից երկար ժամանակ թաքցնում էր իր ունեցվածքն ու կուտակած արծաթը: Բայց որովհետև հիվանդ էր, շատ պաղատեց ու աղերսեց, որ կորկոտ եփեն իր համար: Եվ երբ բերին, նա, պառկած մահձին, հացի փշրանքների փոխարեն այդ հին արծաթա-

դրամները բրդեց և մեծ ախորժակով գդալով կերավ դրանք, որից հետո իսկույն խեղդվեց»։ Ահա նաև մի զվարճալի պատմություն աղոթասիրությանը նվիրված գլխից. «Ոմն սրբասեր և աստվածահաճո քարոզիչ էշով շրջում էր այս ու այն կողմ կենսատու խոսքը սերմանելու նպատակով։ Մի օր նա աղոթելու համար եկեղեցի մտավ և էշը կապեց եկեղեցու դռանը։ Բայց հագիվ էր «Մեղա հայրը» երկինք ուղղել, երբ քանիցս մտազբաղ խորհեց, որ կարող են էշը գողանալ։ Նույնպիսի այլ մտածմունքներ ևս նրան շեղում էին աղոթքից։ Այդ տեսնելով, նա շտապ դուրս եկավ եկեղեցուց ու էժան գնով վաճառեց էշը, չկամենալով այնուհետև աղոթքի ժամանակ զբաղեցնել իր միտքը և շեղել Աստծուց»։

Հայկական հնագույն և միջնադարյան թարգմանությունների պատմամշակութային արժեքի գնահատմանը նվիրված այս համառոտ ակնարկից, թվում է, կարելի է պատկերացում կազմել այն մասին, թե այդ թարգմանություններն ինչպիսի նշանակալից դեր են խաղացել հայ ժողովրդի մտավոր կյանքում, որքանով են նըպաստել Հայաստանում համաշխարհային գիտության, արվեստի ու գրականության նվաճումների տարածմանը և հող նախապատրաստել բուն ազգային մշակույթի սկզբնավորման և զարգացման համար։ Թարգմանական գործը, որպես կանոն, բուռն ծավալում է ստացել հատկապես հայկական մշակույթի վերելքի և ծաղկման ժամանակաշրջաններում, երբ հայ ժողովրդի հոգևոր կյանքը իր հարաճուն պահանջներն ու հետաքրքրությունները բավարարելու նպատակով կարիք է զգացել սնուցման նոր և առատ աղբյուրների։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ակինյան Ն., Դասական հայերենը և վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932:
- Արևշատյան Ս., Հնագույն հայկական թարգմանությունները և նրանց պատմամշակութային նշանակությունը «Պատմա-բանասիրական հանդես» 1973, № 1, էջ 23 — 37:
- Զարբիանալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ — ԺԳ), Վենետիկ, 1889:
- Խաչիկյան Լ, Բռնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Բռնեցու գիտական գործունեությունը («Յովհաննես Բռնեցի, Յաղագս Քերականին» գրքում), Երևան, 1977, էջ 5 — 51:
- Մանանդյան Հ., Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1928:
- Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971:
- Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.
- Аревшатян С., Формирование философской науки в Древней Армении (V — VI вв.), Ереван, 1973.
- Аревшатян С., К истории философских школ средневековой Армении (XIV в.), Ереван, 1980.
- Djanachian M., Les arménistes et les Mekhitaristes, „Armeniac“, Venise, 1969, p. 383 — 445.
- Oudenrijn M. A., Linguae haicanae scriptores Ordinis Praedicatorum Congregationis Fratrum Unitorum, Bern, 1960.

ԼԵՎՈՆ ՏԵՐ — ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայ հին թարգմանական
գրականություն

Левон Тер-Петросян

ДРЕВНЕАРМЯНСКАЯ ПЕРЕВОДНАЯ ЛИТЕРАТУРА

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1984

Խմբագիր՝ Օ. Ա. Մարկոսյան
Նկարիչ՝ Զ. Ե. Աֆրիկյան
Գեղ. խմբագիր՝ Ֆ. Գ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Կ. Ե. Մամիկոնյան

ИБ № 4864

Հանձնված է շարվածքի 11.05.83: Ստորագրված է տպագրության 15.12.83:
ՎՖ 09529: Ֆորմատ 70×108^{1/32}: Թուղթ՝ օֆսետ: Տառատեսակ՝
«Արարատ»: Տպագրություն՝ օֆսետ: 2,62 պայմ. տպ. մամ, 2,78 պայմ. ներկ.
թերթ, 2,25 հրատ. մամ: Տպաքանակ՝ 10000: Պատվեր 1804: Գինը՝ 20 կոպ:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван — 9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական
կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան — 82, Էջմիածնի խճուղի 48:
Типография цветной печати Госкомитета по делам издательств, полиграфии
и книжной торговли Арм. ССР, Ереван — 82, Эчмиадзинское шоссе, 48.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0686030

ՀԱՅԿԱՅԻՆ

AD
121816

.. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ ..

1964